

4997

4998

4999

5000

391.99

Q=13

2011

Պարկետարանից բալոր սրկների միաժամ:

89699

12-13

ԱԼ-ԱԲԵԼԵԱՆ

Կ. Կ.

Ա Ճ Ի Պ

Գիշե երեխ արարող

2003

1921

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՑ

Государственное Издательство. Армянская Секция.  
РОСТОВСКОЕ Н-Д ОТДЕЛЕНИЕ.



9007

399

1. ՅԱՐՈՒԹԻՒՆ կօշկակար 60 տարեկան.
2. ՄԱՐԻԱՆ նրա կինը 55 տար.
3. ՕՎԱՆԵՍ նրանց որդին 27 տար.
4. ԱՐՋԱՄ փականագործ, Յարութիւնի եղբարորդին 26 տար.
5. ԳԱՅՊԱՐ զինագործ, Օվանէսի ընկերը 28 տար.
6. ՄԱՐԴԱՐ Յարութիւնի մօտ բանող կօշկակար, մօտ 35—40 տ.
7. ԱՐՄԵՆԻԱԿ Յարութիւնի աշակերաներից 18 տար.
8. ՍԱՀԱԿ փայտի պահեստի պահապան, ժամանակից առաջ զառամած 55 տար.
9. ԳԱՅԻԱՆԵԼ մօտ 50 տար, նրա կինը.
10. ՇՈՒՇԱՆԻԿ սրանց աղջիկը, Օվանէսի նշանածը 22 տար.
11. ԳՐԻԳՈՐ Փրանտ հագնուող, խաղամօլ երիտասարդ.

Թուղթ խաղացրդներ, կօշկակարի աշակերտներ. Բոլորը հագուստմ են կէսերոպական, կէսասիական ձեռվլ. Անցքը պատահում բաքու, մօտ 1902 թւականին:

1526

## Ա Ր Ա Ր Ա Ռ Ա Զ Ի Ն

Միջակ մեծութեան սենեակ, Զախ պատի վրա լուսամռւթ.  
րա առաջ սեղան, վրան լամպ՝ թղթէ լուսամփոխով, կողքերին  
իմի մոմակալ: Պատուհանի շ կողքին, պատի վրա կախւած է  
ի ձեռագործ հողաթափ, թղթեր դնելու պայուսակ, մի կանացի  
եռքի քսակ և ֆօտոգրաֆիական պատկերներ: Սեղանի շուրջը և  
ուհասարակ սենեակում աթոռներ: Սեղանի աջ անկիւնը յարմա-  
եցուած է խոհանոցի համար: Այգտեղ կողքի վրա քցած է մի  
տկո, որի մէջ խոհանոցի ամանեղէններ, իսկ վրան կերոսինի հը-  
ռց և այլ պարագաներ: Մէջտեղի պատի մէջ շ դուռ, որոնց աջ  
ողմինը տանում է դուրս, իսկ ձախակողմինը ննջարան, կամ նոյ-  
շն է խաղասենեակ: Այդ գուռը բացւելուս երեսում է սեղան,  
ուրջը աթոռներ, իսկ խաղի ժամանակ և խաղացողներ:

Երեկոյ է, մութը քիչ քիչ իջնում է, որից յետոյ վառում են,  
լամպեր սենեակը լուսաւորելու, իսկ մօմերը խաղասենեակը լու-  
աւորելու համար:

1

### ՍԱՀԱԿ և ԳԱՅԻԱՆԵ

ԵՐՈՒՆԻ — ՍԱՀԱԿ (Որ նստած էր, ոտքի ելնելով): Խելքդ զլսի՞Դ  
է, Գայիանէ, Աղջիկ նշանել և յետոյ յետ կտրելը հա-  
նաք էք կարծում: Օր մեծութիւն ուզում էք մնդ խայ-  
տառակել: Ի՞նչ վատ բան դտաք Օվանէսի մէջ: Կա-  
րելի է դուք նրա երեսի դեղնութեանն էք նայում:  
Բայց նա ջլոտ է, նա երկաթի առողջութիւն ունի,  
նրա զեղնութիւնը նրանից է, որ գլուխը քաշ աշխա-  
տաւորի մէկն է: Ինքը մեծի պատիւը հասկացող, խո-  
նարհ և աղնիւ:

ԳԱՅԻԱՆԵ — ի՞նչ անեմ, եթէ երեխայիս սիրաը կտրւել է նրանից:  
ՍՈՀԱԿ Բայց եթէ Շուշանը երեխայ է, եթէ նա չի հասկանում,  
ինքը հասկացրու նրան: Վերջապէս մտածեցէք թէ ինչ  
կասեն ուրիշները:

ԳԱՅԻԱՆԵ — Ուրիշները ինձ հաց հօ չեն տալիս, չեն պահում, որ  
ամաչեմ, թող գետինը մտնեն, թող մէջները տափին  
կպչի մեղնից լաւ ապրողների: Ավ ունի իրաւունք իմ  
գլխին դատաւար լինելու: Փառք Աստծոյ, հիմա ոչ թէ  
նշանուածների, այլ երեխատէր ամուսինների բաժանու-  
հն էլ ոչ ոքի չի դարձացնում:

ՍՈՀԱԿ — Զայնդ, Չլինի՛, չիմանամ նրա մօտ էլ այդպիսի բաներ՝ խօ-  
սես, թէ չէ, սատանան զիտէ, թէ առանց այն էլ ինչ  
մօլորութիւններով ենք ըջաւատաւած:

ԳԱՅԻԱՆԵ Ինչ ես չարանում: Բերանիցս թուղթ հօ չեմ տուել նը-  
րան:

ՍՈՀԱԿ — Իսկ մեր խօսքը, իսկ նրա տուած մատանին: Իսկ մեր հին  
բարեկամութիւնը նրա հօր, — վարպետ Յարութիւնի և  
մօր Մարիամի հետ, թէ այդ բոլորը ուղում ես միան-  
դամից ջնջես: Թէ քեզ համար մի դատարկ բան է թը-  
քածը յետ լիզել:

ԳԱՅԻԱՆԵ — Իսկ եթէ մենք սխալուած ենք, Միթէ մի դատարկ  
խօսքի համար պէտք է վեր կենամ իմ երեխայիս ան-  
բախտութեան պատճառ դառնամ:

ՍՈՀԱԿ — Զայնդ, ասում եմ: (Խորհրդաւոր), Մի ստիպի ինձ հին  
դարմանը քամու տալ: Հա, ապշտամ ես, Դէ, գնա փառք  
տուր Աստծուն, որ նրանց ականջը ոչինչ չի ընկել: Թէ  
չէ կօշկակար Յարութիւնի որդին չէ, որ վերջին շառ-  
լատանը քեզնմանի աղջկայ անունը չէր տայ: Հասկա-  
ցար:

ԳԱՅԻԱՆԵ — Շատ հարկաւոր էր: Մեզնից լաւ են, թող գնան իրանց  
քաղցած չմնալու հոգուը քաշեն: Ամեն շաբաթ իր գոր-  
ծադուլ անող բանտորների ձեռքին գլուխն է կոցրել:

ՍՈՀԱԿ — Սանձ դիր լեզուիդ, և վարպետօրէն խօսքը մի փոխիր: Ես  
քեզ ասում եմ, — եթէ կորեկի չափ էլ է խելք ունես:  
այնպէս արա, որ աշխարհի խայտառակութեան առար-  
կայ չլինենք:

ԳԱՅԻԱՆԵ — Բաւական է, լուն ուզա մի շինիր:

ՍՈՀԱԿ Էհմ. ինչու չի երկինքը պատառում ու զիլիս կրակ թափ-  
ւում: Ինչու չեմ կարողանում առնել գանակը և սրտիդ  
մէջ նստեցնել, որ այս—ձեռքիցդ այրւած սիրտս հո-  
վանայ:

ԳԱՅԻԱՆԵ — Հերիք գլխներս տանես, ի սէր Աստծոյ, բաւական է  
ինչքան զզուեցրիր:

2

ՍՈՀԱԿ, ԳԱՅԻԱՆԵ և ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ — (Մանում է մուտքի դռնով: Հագված է անճաշտել: Զե-  
ռիս կարմիր արեսկալ, կանաչ կապոյտ, դեղին կօֆտ,  
կարմիր զլիարկ, ձերմակ ձեռնոցներ, Յոզնաց է): ԱՌ, Ք-  
յօդնեցայ շատ ման գալուց, (Յանկարծ փոխւելով): Այս  
ինչ է: Ավ զիտէ էլի ինչ ախրութիւն ես բերել այս  
տուն:

ՍՈՀԱԿ — (Խոր հայեացք քցելով նրավրա և ոտից գլուխ չափելով):  
Ինչից իմացար, Շուշան:

ՇՈՒՇԱՆ — Միթէ դէմքդ չեմ տեսնում: Ինչ ես ուզում խեղճ մայ-  
րիկիցս: Մին խղճա նրան էլի: Զօ տեսնում ես տան  
հոգսից չորացել է ոտքի վրա:

ԳԱՅԻԱՆԵ — Օֆ, սա օ՛ր է, որ մենք ենք քաշում, Տէր,  
ԳԱՅԻԱՆԵ — Գիշեր ցերեկլիսեղմին չարչարելով, չկշտացար: Ուրիշնե-  
ՇՈՒՇԱՆ — Գիշեր ցերեկլիսեղմին չարչարելով, չկշտացար: Զէ որ դու մօտ  
ըն չեն խղճում, գոնէ դու խղճացիր: Զէ որ դու մօտ  
ես, չէ որ նա միշտ քո աչքիդ առաջ է:

ՍՈՀԱԿ — Թեզ ով ասաց, Շուշան, որ ես նրան չարչարել եմ:

ՇՈՒՇԱՆ — Ո՞վ պիտի ասէր, Միթէ ես ինքս չեմ նկատում: Այ, հենց  
այս բոպէին էլ աշքերիցդ կրակ է թափվում: Բայց ին-  
չու, ինչ մեղք է դործեել նա: Ում պատառն է խլել

ձեռքից, Ռւմ տունն է քանզել:

**ՍՈՀԱԿ** — Բայց դու նախ և պռաջ հարցրու, թէ ինչի մասին էինք խօսում,

**ՇՈՒՇԱՆ** — Առանց հարցնելու էլ շատ լաւ եմ իմանում, թէ ինչ մասին կլինէր:

**ՍՈՀԱԿ** — Ուրեմն քո ասելով, եթէ այս տան մէջ մի վատ բան նկատեմ, չխօսեմ, հա:

**ՇՈՒՇԱՆ** — Այս տան մէջ ոչ մի վատ բան չկայ: Աւելի լաւ է մի օգտակատ բանի մասին խօսես: Վատ բան մեր կեանքն է, մեր ապրուստն է, մեր զրութիւնն է: Աստուած իմ: Փողոց եմ դուրս գալիս, ուրիշ աղջիկների զոյնզոյն շորեր հագածը, կառքերով ման գալն եմ տեսնում, քիչ է մնում նախանձից սիրտս տրաքվի: Տուն եմ գալիս,— աղքատութիւն, քաղցածութիւն: Իսկ դու անվերջ խըրատներ ես կարդում զիմներիս.

**ԴԱՅԻԱՆԻ** — Հմ, դեռ այդ բաւական չէ, տես ինչ բարկացած աչքերով է նայում չորերիդ:

**ՍՈՀԱԿ** — Երեի ինքներդ էլ էք նկատում, որ մեզպէսներին այդ ի սագում:

**ՇՈՒՇԱՆ** — Այս Տէր Աստուած: Ինչու ուրիշներին կսազի, մեզ չէ: Ի՞նչ է ուրիշները երկնքից են վայր եկել: Թէ այս աշխարհը հաւասարապէս ամենքին չի պատկանում: Դէ եթէ այդպէս է, ել ինչու ենք կանգնել հանենք ու տկլոր ման գանք էլի:

**ՍՈՀԱԿ** — (Ապշած): Ես այդպէս չեմ ասում, Շուշան: Սա ինչ լեզու է քեզնում: Մէկ ամաչիր, աղջիկարմատ ես, տես ինչ ես խօսում:

**ԳԱՅԻԱՆԻ** — Ինչ ես երեխայիս երեսը թափում: Սուտ է ասում:

**ՍՈՀԱԿ** — Օֆ, դու լռիր, համբերութիւնից մի հանիր ինձ, թէ չէ խռով կանեմ այս կիրակի օրը քո զիմին:

**ԴԱՅԻԱՆԻ** — Իսկի էլ չեմ լրի: Ինչո՞ք է նա պակաս ուրիշներից: Բերանի համը չի հասկանում: թէ,— հեռու իրենից՝— աչ-

քերն է կոյլ:

**ՍՈՀԱԿ** — Բայց դու նրան սովորցրու մի լաւ բան,

**ԴԱՅԻԱՆԻ** — Ես նրան սովորեցնում եմ և պէտք է միշտ էլ առվորցնեմ,— ինչ որ իմ խելքն է կտրում:

**ՍՈՀԱԿ** — Հա, այդպէս է: Միթէ նրա համար, որ հայրը անաջողութիւնների մէջ է մաշել իր կեանքը, իր հարազատ զաւակի բերանից յանդիմանութիւններ պիտի լսի: Միթէ շարաթի լուր օքնը փայտի պահեստում, պահապանի պաշտօնում, մի փոքրիկ, կեզառու, մրու տնակում նրա համար չեմ ուկոր փթացնում: Ոչ բարով մայր ես, վաղը միւս օրը նա պէտք է պատկի ու հայրական տնից հեռանայ: Դու հասկացրու նրան, որ նա այնտեղ պարտաւոր է ամեն կերպ աշխատել մեր երեսը պարզ անել: Այնպէս չէ Շուշան:

**ՇՈՒՇԱՆ** — Սա ինչ խօսակցութիւն է, մայրիկ: Միթէ մինչեւ հիմայ դու նրան ոչինչ չես ասել:

**ԴԱՅԻԱՆԻ** — Նրան ինչ ասեմ: Նրան ասած, այս պատերին ասած: Նա պահանջում է, որ դու զոհես քնզ իր տուած մի դատարկ խօսքի համար:

**ՇՈՒՇԱՆ** — Հա:

**ՍՈՀԱԿ** — Այս Շուշան, թիշ աղջիկներ կան, որ այդպէս են անում, բայց յետոյ այնպէս են բաղդաւորվում, որ ծնողի միշտակն են օքնում:

**ՇՈՒՇԱՆ** — Վնաս չունի: Որ այդպէս է, ես ինձ կիսեղեմ, թողնա դա դայ և պսակի իմ զիակի վրա:

**ՍՈՀԱԿ** — Ապա եթէ այդպէս էր ինչու էիր սկզբից քեզ ուրախ ցոյց տալիս:

**ՇՈՒՇԱՆ** — Ի՞նչ անէի, երբ քեզնից վախենում էի:

**ՍՈՀԱԿ** — Իսկ հիմայ էլ չես վախենում:

**ՇՈՒՇԱՆ** — Ո՛ւժիք... սա ինչ ասանջանք է:

**ՍՈՀԱԿ** — Ոչինչ, ոչինչ, սիրելիս: Ես էլ չեմ երկարացնի: Արա ինչպէս քո սիրող է ցանկանում: Տեսնում եմ, մեծացել ես,

Հնորհքի շատացել է. և աշխարհի չարն ու բարին ինձնից լաւ  
ես հասկանում էի. զնա կապիր բեր իմ փոխնորդս:  
ՇՈՒՇԱՆ — (Կողմ), Փառք Աստծոյ, պրծանք ձեռքիցը: (Գը-  
նաց ննջարան):

3

ՍՈՀԱԿ և ԳԱՅԻԱՆԵՔ, յետոյ ՇՈՒՇԱՆ

ՍՈՀԱԿ — Ինչու Էի շատ սիրելուց այնքան երես առավիս քեզ, որ  
այսորվա օրը երեսիս կանգնէիր:

ԳԱՅԻԱՆԵՔ — Ինձ չէիր հաւատում, դէ, զնա: Հիմա հօ, փառք  
Աստծոյ քո ականջով լսեցիր:

ՍՈՀԱԿ — Այս. ես իմ ականջով լսեցի: Ես իմ աչքով տեսայ քո  
այդ մի նոր արարմունքդ էլ, և... ինչ խօսք... հիացայ:

ԳԱՅԻԱՆԵՔ — Վահ ես ինչ մեղք ունիմ, չէր Աստւած, մարդ հօ  
չեմ սպանել:

ՍՈՀԱԿ — Ինչու Աստւած ինձ մի արիւնարբու գաղան չի ստեղ-  
ծել, որ իսկոյն պատառ-պատառ անէի քեզ:

ԳԱՅԻԱՆԵՔ — Ինչ վատ բան եմ արել քեզ:

ՍՈՀԱԿ — Դեռ երես ունես. դեռ համարձակվում ես հարցնել: Էլ  
ինչ պիտի անէիր անդգամ: Թսան տարով աւելի ես ծերացրել  
ինձ: Թո արարմունքիդ պատճառով ամօթից փողոցներում  
զլուխս քաշ քցած այսպէս եմ ման եկել: (Ծոյց է տալիս):  
Եւ ամեն կերպ աշխատել եմ մարդկանց աչքից փախչել:  
Ահա թէ քո պատճառած ցաւը տանելով, այսպան տարի ինչ-  
պէս եմ տանջուել:

ԳԱՅԻԱՆԵՔ — Իսկի էլ դու չես տանջուել: Այո: Եթէ մեզնից մէկը  
տանջուել է, այդ եղել եմ ես:

ՍՈՀԱԿ — Օ լիք, որ ոտքի տակ ես տուել ամեն մի սրբութիւն:  
Յիշիր, քանի քանի անդգամ է պատահել, որ ամիսներով երե-  
սիդ չեմ նայել, որ հետզ չեմ խօսել: Քանի անդգամ է պատա-  
հել, որ կամեցել եմ զլուխս վերցնել, փախչել ու քո երեսիցդ  
ազատվել:

ԳԱՅԻԱՆԵՔ — Փախչէիր էլի: Ճանապարհդ հօ չէինք կտրել: Ինչու

էիր մնում:

ՍՈՀԱԿ — Որովհետև կարծում էի, թէ մի օր կփոշմանես ու Աս-  
տրծոյ ճանապարհին կդաս: Իսկ դու, անմիտ, կարծում էիր՝  
եթէ քրիստոնէին վայել համբերութիւնով լռում եմ, և տա-  
նում, ապա քեզ հետ մեղսակից եմ: Կարծում էիր, մի ցած  
արարմունքի տէր, մի անլեզու անասուն եմ: Բայց չէիր մը-  
տածում, որ եթէ ես տանում եմ, տանում եմ նրա սիրոյ,  
նրա բաղդաւորութեան համար: Իսկ դու այդ բոլորի փո-  
խարէն ինչպէս ես վարձատրել էնձ: Ո՞ւր է նրա տաշջվայ  
փաղաքանքը: Նա առաջ այս իմ սեացած ձեռքերից, այս  
աղտոտված շորերից չէր խորշում: Նա առաջ ինձ սիրով  
«Հայրիկ» էր կոչում և գիրկս ընկնում: Ո՞ւր կորան նրա որ-  
դիական սէրը, նրա քաղցր հայեացքը: Ինչու այդ ամենը ես  
այլս չեմ տեսնում: Ինչու այսօր ես նրա համար մը ատելի  
օտար եմ:

ԳԱՅԻԱՆԵՔ — Ի՞նչ է, ոսկու ու քարեղնների մէջ ես պահել նրան:  
Շքէղ հազուսաներով ես դուրս բերել մարդկանց առաջ: Աղա-  
խիններով ես շրջապել նրան: Ի՞նչ ես արել նրան բախտա-  
ւոր անելու համար: Աչք ենք բացել բացի ցամաք հացիցդ  
ինչ ենք տեսել: Բայց ուրիշների բախտաւորութիւնը տեսնե-  
լով նախանձից տրաքվելուց, ինչ օր ենք տեսել: Սա չէ քո  
տուածը, որ մեծ մեծ խօսում ես:

ՍՈՀԱԿ — Օխ լսիր: Լսիր, թէ չէ մի օր կձաքացնես իմ սիրով:  
(Սիրտը բռնելով, նստեց զլիսիկոր: Շուշան մի կապոց ձեռին  
մտաւ ննջարանից):

ԳԱՅԻԱՆԵՔ — (Ծածուկ Շուշանին): Սիրտը առ: Մի շխուք ասա,  
զլիսից արա, ճամփա զիր:

ՇՈՒՇԱՆ — Բայց դու իզուր ես մեղնից նեղանում հայրիկ:

ՍՈՀԱԿ — (Դառնութեամբ): Ես ձեղնից նեղանում: Աստւած մի  
արասցէ: Ընդհակառակը, ես այնքան եմ ուրախ, որ թաշելու  
թե չունիմ: Այո, այո: Մայր ու աղջիկ մի զարմանաք: Մի  
ցնդգած ձերդուկ եմ ձեզ համար: Ի՞նչ կպատկանի ինձ, գե-

բեղմանի խորքից վեր կենալ ու ձեր գլխին խելք ու խրատ կարդալ: Արէք ինչ սրտներդ է ուզում Եւ ով որ համարձակութ ձեզ հակառակը սովորցնել, այնպիսիի հակառակ մէջտեղին թքեցէք: Էհ, (ելաւ): Չուշանանք մեր գործին. թէ չէ առանց այն էլ ծուռ աչքով են նայում վրաներս: Չվնի թէ տեղից էլ զրկին մեզ: (Առաւ կապոցը, ձեռափայտը և զնաց դուրս տանող դռնով):

ՇՈՒՇԱՆ — (Նայում է նոյն դռնից դէպի աջ, ուր զնաց Սահակը): Ախ, խիդս ինձ տանջում է: Զնեղանաս մայրիկ: Շատ խիստ վարվեցինք հետք: Ախ, նայիր, մայրիկ, նա խօսքի է բռնուել Գասպարի հետ:

ԳԱՅԻԱՆԷ — Դու զգոյշ եղիր այդ Գասպարից:—Վրաներս հաչող շներից մէկն էլ նա է: Այն օրից, որ ոեխով սսկոռ չընկաւ, կատաղած է քո վրա:

ՇՈՒՇԱՆ — Ի՞նչ ես ասում: Նա այնպէս էր քսքսվում, այնպէս էր սիրահարուած վրաս, որ եթէ հրամայէի, քիչ կմար ոսքերս ընկնէր, Ահ գալիս է:

ԳԱՅԻԱՆԷ — Հեռացիր տեսնեմ ինչ պիտի ասի:

ՇՈՒՇԱՆ — Այո, հեռանամ, թէ չէ շնացած է երեսում: (Գնաց ննջարան, մուտքի դռնով մտաւ Գասպարը):

4.

ԳԱՅԻԱՆԷ, ԳԱՍՊԱՐ յետոյ ՇՈՒՇԱՆ:

ԳԱՍՊԱՐ — Ճշմարիթ է, Շուշանիկի նշանը յետ էք կարում:

ԳԱՅԻԱՆԷ — Ախ, Գասպար ջան, այդ տու ես: Գիժ տղայ, ներս ես մտել, այս ժամամաթին գեռ մէկ բարի երեկոյ ասա, նստիր, հանգստացիր, Էլի: Էհ, համեցէք, ի՞նչ նորութիւն:

ԳԱՍՊԱՐ — Աստծոյ գառն մի ձեանալ: Անուշ խօսքերդ «ուրիշներ» համար պահիր: Հասկացար:

ԳԱՅԻԱՆԷ — Բացի քեզանից ուրիշ որին ենք պատիւ անում:

ԳԱՍՊԱՐ — Ես քեզ բան եմ հարցնում: պատասխանս տուր:

ԳԱՅԻԱՆԷ — Ախար ի՞նչ է պատահել, որ այդպէս տաքացել ես:

ԳԱՍՊԱՐ — Ես քեզ հարցնում եմ:—Ճշմարիթ է:

ԳԱՅԻԱՆԷ — Ի՞նչ ես 2 ոտքդ մի չմկում զրել Քինչ ես դանակը կոկորդիս զրել: Ես զիտեմ իմ աղջիկը:

ԳԱՍՊԱՐ — Հա: Դէ էլ ինչու ես պատէպատ ընկնում: Պատոիր երեսիդ վերջին ամօթը. բացարձակ ասա, —իշխանազունի արժանի աղջիկ ունես, որ Աստուած մէկին գեղեցկութիւն է տուել միւսին փող: Միթէ բանը այդտեղն ես ուզում հասցնել:

ԳԱՅԻԱՆԷ — Ես քեզ խնդրում եմ, պատիւդ հասկանաս ու լեզուիդ չափը չմառանաս: Փ

ԳԱՍՊԱՐ — Սրա համար էիր ամեն օր աղջկանդ զուգում—զարդարում և թղթախաղի ժամանակ մօներս նստեցնում: Ի՞նչ էր քո միտքը:

ԳԱՅԻԱՆԷ — Ի՞նչ անենք. նա էլ ձեր քոյրը: Դուք հօ օտար չեք մեղ համար: Զէ որ ես էլ մի խեղճ կին եմ: Զէ որ դոք իմ մշտական հիւրերն եք:

ԳԱՍՊԱՐ — Մի աշխատի արդարանալ: Գեղեցիկ աղջիկները մնա համար չեն կոտորվել: Խեղճի եկ քանի ուշ չէ և եթէ մօր պարտքը լաւ ես հասկանում, շտապիր, տուր աղջիկդ իր նշանածին:

ԳԱՅԻԱՆԷ Այնպէս ես տաքացած, կարծես Օվանէսի հարազատ եղայրն ես:

ԳԱՍՊԱՐ — Ես քեզ ասում եմ,—աւելի քան եղայրը:—Ռւշի եկ: Ես այստեղ փող տանելու համար չեմ գտվիս: Զինագործ եմ և մի կտոր մաքուր վաստակը չի կտրվել ինձ համար: Ռւշի եկ, կրկնում եմ:—Ամբողջ մեր թաղը քեզ մատով է ցոյց տալիս: Ռւզում ես իմանալ ով է Օվանէսը ինձ համար: Հարցրնե աղջկանդ: Նա զիտէ ամեն բան: Նա կպատմի քեզ: Ես Օվանէսի համար զոհել եմ մի անդին... զոհել եմ մի անկարելի բան: Եւ հիմայ էլ են երդգում եմ:—կեանքս կզոհեմ, բայց ոչ ոքի չեմ թողնէ: մի մատով անդամ կպչի նըրա նշնանածին: Գլուխս կտամ, բայց չեմ թողնի: Ռւրեմն, եթէ զիմումդ բռն է զրել մի ուրացի չեմ թողնի:

բիշ միտք, հանիր ու գէն գցիր: Խսեցիր: Այսօրվանից քո ազ-  
ջիկը թող չհամարձակվի խաղի ժամանակ խաղասենեակ ուաք  
կնել: Զամարձակվէք մայր ու աղջիկ ֆրանտ Գրիգորի  
չորս կողմը պատել, թէ չէ երդվում եմ մօրս դերեղմա-  
նով, կարող է մեծ խայտառակոթիւն ծագել:

**ԳԱՅԻԱՆԵ** — Գասպար ջան, իզուր ես նախանձում, մենք պարոն  
Գրիգորին նոյնքան ենք պատվում, ինչքան և քնզ: Մի մա-  
ռանալ, որ նա նորունոր է ոտք զրել մեր տուն:

**ԳԱՍՊԱՐ** — (Նայեց նրան), Դու ինձ ասա, ինչպէս է պատահել,  
որ Աստուած քեզ սատանայ ստեղծելու տեղ՝ կինարմաատ  
է ստեղծել:

**ԳԱՅԻԱՆԵ** — Տօ անգութ, անաստուած. ձեռք չես վերցնելու ինձ-  
նից ինչ ես այսօր լնդուիդ կապը բաց թողել:

**ԳԱՍՊԱՐ** — (Բռնեց նրա թերից): Աղջկանդ կապը հաւաքիր, Սրա-  
նով ինչ պէտք էր, բոլորը ասացի: Մնացեալը ինքդ գիտեա:  
(Քնաց յետ):

**ԳԱՅԻԱՆԵ** — Հողեմ գիտ գլուխդ: Քեզ պէս հակարի գլուխը կիսա-  
րեմ, (Կանչեց), Շուշան, շալս րեր: (Շուշան, ննջաըանից բե-  
րում է շալը): Լաւ մտիկ արա, Շուշան: Այդ շունի հետ  
մի փոքր զգոյշ վարդիր, Գլուխը եղիր, թէ չէ լաւ բան  
չեմ գուշակում: Սատանան զիտէ ինչ չար միտք կայ նրա  
գլմում:

**ՇՈՒՇԱՆ** — Ուր ես դնում:

**ԳԱՅԻԱՆԵ** — Ես գնամ տղերբոնց համար մի քիչ բան ման դնեմ:  
Հիմայ նրանց զալու ժամանակն է: Հա չմոռանամ ասել,  
Գասպարի մօտ պարոն Գրիգորին շատ էլ մօտ մի թա-  
գիր: Խսկ առանձին, համեցէք արա, պատիւ տնւր: Հե-  
տը սիրով եղիր, սիրով վարդիր: Տեմնում ես տղերբոնց  
մէջ ամենքից ձեռքը բացը նա է: Ամենից շատ օգուտ  
տուղներս էլ, մեր ցաւը հասկացողն էլ նա է: Հազիւ է

Աստուած նրան մեզ համար հասցրել: Գէտք է կապը  
ձեռքներիս ամուր պահենք: Հասկացար, որդի:

**ՇՈՒՇԱՆ** — Դէ բաւական է.. հասկանում ենք:

**ԳԱՅԻԱՆԵ** — Մի ամաչի, սիրելիս: Այստեղ ամաչելու բան չկայ:  
Աշխատիր մօտը շորերդ, մազերդ կարդին լինի:

**ՇՈՒՇԱՆ** — Ես այդպէս էլ շատ լաւ եմ.

5.

**ԳԱՅԻԱՆԵ**, ՇՈՒՇԱՆ և ԳՐԻԳՈՐ:

**ԳՐԻԳՈՐ** — (Մտաւ մուտքի գոնով, նա հազված է դեղնցիկ, ձեռքին  
ուտելելզէն և այն): Բարի երեկոյ ձեզ: (Սեղանի վրա է  
զնում բերածը):

**ԳԱՅԻԱՆԵ** — Ախ, պարոն Գրիգոր. այդ գուշք էք: Սա ինչ նեղու-  
թիւն էք քաշում, ամեն անգամ:

**ԳՐԻԳՈՐ** — Մի նեղանանք, Գայեաննա Արիսալաոմվեա, Բնութիւնս  
է այդպէս:

**ԳԱՅԻԱՆԵ** — Համեցէք, որդի համեցէք: Ազքներիս վրա տեղ ունէք:  
Չեր տունը համարեցէք: (Ծածուկ ստիպում և Շուշանին ու-  
ու ձեռքի ընկնել):

**ԳՐԻԳՈՐ** — Զափաղանց չնորհակալ եմ: Լաւ էք, մայրիկ: Ո՞ղջ, առողջ:

**ԳԱՅԻԱՆԵ** — Մեզ ինչ հարցնել: Դնաք լաւ մինեք, որ մենք էլ ձեր  
շուաքում ապրինք, Դուք երիտասարդ էք, գեղեցիկ: Միկ  
հազված:

**ԳՐԻԳՈՐ** — (Շուշանին): Տեմնումէք օրիօրդ: Չեր մայրը կօմպիմնոտ  
ասեն էլ զիտէ:

**ԳԱՅԻԱՆԵ** — Միթէ սոււտ եմ ասում: Միթէ Շուշանիկը ինքը չի  
իմանում: Շատերն ունեն ձեր քաղցր բնութիւնը: Գուք միշտ  
մեզ յիշում էք. ամեն երեկոյ չնորհ բերում, Շուշանիս  
զբաղեցնում:

**ԳՐԻԳՈՐ** — Ի՞նչ անեմ: տեսնելով որ ինձ պատւով էք ընդունում,  
աշխատում եմ ինքս էլ պարտքում չմնալ:

**ԳԱՅԻԱՆԵ** — Միայն ներէք, որ ձեր շիկին մի փոքր անյարմար է  
մեր այս,.. անշուք բնակարանը:

ԳՐԻԳՈՐ — Ոչինչ. եթէ գործը լաւ գնայ, բնակարաններդ էլ կփոխուի, Բայց ինձ համար մինոյնն է. եթէ իմ աշքով նայելու լինեք, սա էլ մի դրախտ կթուայ ձեզ.

ԳԱՅԻՍՆԵ — Իսկ մենք, — ինչպէս տեսնում էք, — թէ և մի բանի տէր չենք, բայց գեռ թշնամիներ էլ ունենք.

ԳՐԻԳՈՐ — Ո՞վ չունի թշնամի? Տեղը եկաւ, մենք էլ, ուրիշների թշնամին ենք. Այ, նայեցէք, 5 մատ ունենք, բայց ոչ մէկը միւսին չի նմանում:

ԳԱՅԻՍՆԵ — Բայց անարգարութիւն չէ, որդի, Քաղցած մասնում ես, մի օգնութեան ձեռք մեկնող չի լինում, բայց հենց որ մի գործ ես սկսում, որ մի կտոր հաց ձեռք բերես, ամեն կողմից հաջում են:

ԳՐԻԳՈՐ — Ուշը մի դարձնէք. Շունը կհաշի, քարվանը կքոչի. Կեան քիս մէջ շատ մարդիկ եմ տեսել, որ երդուել են ազնիւ լինել բայց երբ կարիքը իր գանակը կոկորդներին է գրել, առաջին աւագակն են դարձել. Բայց... այդ ինչ է այսօր մեր օրիորդը շարունակ լուռ է.

ԳԱՅԻՍՆԵ — Հմ.. Ներեցէք նրան, դեռ երեխայ է. անփորձ է.. մարդկանց մէջ շատ քիչ է գուրս եկել. Այ, ես գնում եմ, իսկ դուք զբաղեցրէք նրան. (Կրկին շարժմունքով ծածուկ ստիպում է աղջկան լուռ շնչայ և այլն. Գնաց մուտքի դռնով):

6

ՇՈՒՇԱՆ և ԳՐԻԳՈՐ.

ԳՐԻԳՈՐ — Սուսաննա իսկականա, ձեր՝ մայրը խնդրեց, որ ձեզ դրազեցնեմ ուրեմն ասացէք, ինչից սկսենք:

ՇՈՒՇԱՆ — Երեկ երեկոյեան դուք ինձ խոստացաք մի քանի փոկուներ ցոյց տալ:

ԳՐԻԳՈՐ — Համեցէք. Այդ իմ արհեստն է: (Առնում է խաղաթը՝ թեր և ցրիւ տալիս սեղանի վրա). Ահա առէք այս կարտը: (Առանց նայելու, տալիս է նրան). Նայեցէք. երեքանոց չէ արդեօք:

ՇՈՒՇԱՆ — (Առնում է և նայում): Այս. բայց...

ԳՐԻԳՈՐ — Իսկ սա: (Եղին): Նիղակի եօթանոցը չէ սա:

ՇՈՒՇԱՆ — Այս... Բայց այդ ինչպէս էք իմանում: Ը

ԳՐԻԳՈՐ — Ապասէք. Այժմ մեղ հարկաւոր է մի պօլիցիական. Այ, նայեցէք, պատկեր չը սա. այն էլ Խաչիկի զինորը, նիշակը ձեռին:

ՇՈՒՇԱՆ — Այս. նա ինքն է, բեղերը ձեղ պէս սրած... թշերը ձեղ պէս կարմիր... Զէ, Աստուած վկայ, ինձ էլ պէտք է սովորցնէք:

ԳՐԻԳՈՐ — Բայց ձեր ինչը կաւելանայ: Թողնենք այդ և խօսենք ուրիշ բան, թէ չէ մարզներումդ կասէք, սա զիմակաւորված բախտախնդրի մէկն է, և ամեն օր գալիս է մարդկանց գլուխը խարում, փողները տանում:

ՇՈՒՇԱՆ — Ոչ ոչ. ես ոչինչ չեմ մտածի ոչ ոքի չեմ ասի: Ասացէք, ինչպէս էք անում, որ ամեն անդամ տանում էք:

ԳՐԻԳՈՐ — Էհ, օրիօրդ ես տանում եմ միամիտներից, իսկ երբ ընկնում եմ ինձնից ճարպիկների կամպանիայի մէջ, տարիվում եմ մինչ վերջին կապէկս:

ՇՈՒՇԱՆ — Զէ չէ. չեմ հաւատում սովորեցրէք ինձ,

ԳՐԻԳՈՐ — Այդ անկարելի է, սեկրետ որ ուրիշ իմանայ, հացից կզրկվեմ: Բացի այդ, այստեղ մեղ կարող են բանել:

ՇՈՒՇԱՆ — Անցնենք ննջարան: Այստեղ մեղ ոչ ոք չի խանդարի: Տղերքը գեռ շուտով չեն գալ: (Մոմակալները տարաւ ննջարան): Համեցէք:

ԳՐԻԳՈՐ — (Թղթերը հաւաքեց. մուտի դուռը ծածկեց). Նա ձշմարիտ է ասում, — «մեղ ոչ ոք չի խանդարի»: (Գնաց ննջարան):

2

ԳԱՍՊԱՐ մենակ, յեաոյ ԳՐԻԳՈՐ և ՇՈՒՇԱՆ:

ԳԱՍՊԱՐ — (Մանում է մուտքի դռնով): Ոչ ոք չկայ, Փառք Աստոյ, որ սխալված եմ. Բայց միթէ իրօք ես սխալված եմ. Օ, ոչ, ես չեմ սխալվել. Ես տեսայ այդ ֆրանտին, Նա ձեռքին

իրեր... ծածուկ շրջվեց փողոցի անկիւնը և երեխ ուզիղ այստեղ եկաւ: (Տեսնելով սեղանի վրայի իրերը): Ա՛... ահա ինչ... ուրեմն նա այստեղ է: (Ննջարանի դռնից ականջ դնելով): Միթք այստեղ է... նրա հետ: Աստուած մի արասցէ: (Ուզում է հանել ատրճանակը): Անէծք սատանային: Ի՞նչ ձայն եմ լսում: Արիւր խփում է զիլիս... Արտաս սկսում է խփելու: (Կանչում է): Գրիգոր Ստեղանիչ, Գրիգոր Ստեղանիչ... (Խփեց զռան):

ԳՐԻԳՈՐ — (Մտաւ ննջարանից): Ա՛, Գասպար Իվանիչ... յարդանքներս: Ի՞նչ է պատահել:

ԳԱՍՊԱՐ — Հը... ոչինչ չի պատահելու: Ես այնպէս... ուզում էի ասել, որ տղերքը գտիս են: (Տեսնելով Շուշանիկին): Ախ... ուրեմն գուք մննակ չէիք այնտեղ: Դուք օրիորդի հետ էիք... ՇՈՒՇԱՆ — Ի՞նչ է պատահել ձեզ, Գասպար Իվանիչ... Գուցէ գուք ձեզ լաւ չէք զգում, գուցէ կկամենաք մի փոքր սառ ջուր խմելու:

ԳԱՍՊԱՐ — Ոչ ոչ... իմ մասին անհանգիստ մի լինէք: Ես մի փոքր վաղելով եմ եկել:

ՇՈՒՇԱՆ — Բայց ձեր երեսին գոյն չկայ...: ԳԱՍՊԱՐ — Ոչինչ... բաւական է, որ ձեր երեսի գոյնը իր տեղն է... թէս... մի փոքր աչքիս կարմրած էք երեսում: Թոյլ տուեթիքը չափազանց սրտաբաց տանտրուհի, ձեր կողմից հրաւիրել տղերքոնց:

ՇՈՒՇԱՆ — Խնդրեմ, խնդրեմ, Գասպար Իվանիչ: (Կողմ): Անպիտանը նկատել է:

ԳԱՍՊԱՐ — (Մուտքի դռնով): Էյ, Մարգար, տղերք-համեցէք... լաւ ժամին ենք եկել էլ ոչ ոքի չենք խանգարի... մի ամառ չէք, մտէք, ամաչելու ոչինչ չկայ... (Մտնում են մուտքով Մարգար և 3—4 այլ խաղացողներ),

ԳԱՍՊԱՐ, ՇՈՒՇԱՆ, ԳՐԻԳՈՐ, ՄԱՐԳԱՐ և ուրիշներ:

ՄԱՐԳԱՐ — (Գրիգորին): Համար խաշաց հաւերը եկան, պարոն Գրի-

գոր, թեփրոտիր հա թեփրոտիր, ինչ պտուղն էք: ԳԱՍՊԱՐ — Էլ մի երկարազնէք, համեցէք: (Ցոյց է տալիս ննջարան, նորեկները անցնում են այնտեղ): Դէ... մի խաղ վերջացաւ, համեցէք, սկսէք մի այլ խաղ..

ԳՐԻԳՈՐ — Իսկ դուք:

ԳԱՍՊԱՐ — Ես իսկոյն:

ԳՐԻԳՈՐ — Շատ սպասել չտաք: (Գնաց ննջարան):

ԳԱՍՊԱՐ — Ուշի եկէք, բաները շատ էլ չեն սպիտակացնի:

ՇՈՒՇԱՆ — Ինչպէս տեսնում եմ դեռ լաւ չէք ճանաչել ձեր մարդուն:

ԳԱՍՊԱՐ — Ի՞նչ:

ՇՈՒՇԱՆ — Այս Ի՞նչ է պատահել որ:

ԳԱՍՊԱՐ — Ոչ բարով նշանած աղջիկ էք գուք: միթէ չէք տեսնում, որ ես ինձ կարցրել եմ..

ՇՈՒՇԱՆ — Ի՞նչ էք ուզում ինձնից:

ԳԱՍՊԱՐ — Ամօթ և պատկառանք... չի կարելի ամեն ինչ սաքիտակ տար:

ՇՈՒՇԱՆ — Տէր Աստուած, տէր Աստուած: Ամենից շատ յարդում եմ ձեզ, ամենից շատ պատում եմ ձեզ, էլի անբաւական:

ԳԱՍՊԱՐ — Հեռացէք աչքիցու...:

ՇՈՒՇԱՆ — Այսօր գժվել էք գուք... ոչ ասածներդ էք հասկանում, ոչ խօսածներդ: (Գնաց ննջարան):

ԳԱՍՊԱՐ — (Քիչ շրջելով, ծխելով): Էլ ինչու համար եմ երկար ու բարակ մատծելով, գլուխս կոտրում: Միամբատ ձեանամ: Ասեմ, բարակ մատծելով, գլուխս խանգարվել է, աչքերը կուրացել: Խարեմ ինքս ինձ, խարեմ Օվանչեսին, որ ոչինչ չեմ տեսել: Ոչ, վատ աւել գիշերացրի: Փշրվեցին իմ յօյսերը.. կորաւ ամեն ինչ: (Մուտքի դռնով մտնում է Գայիտնէ գնած բաներ ձեռին):

ԳԱՍՊԱՐ, և ԳԱՅԻԱՆԵ, յետոյ ՇՈՒՇԱՆ,

ԳԱՅԻԱՆԵ — Ի՞նչ է եղել քեզ:

ԳԱՍՊԱՐ — Զոռ ու ցաւ է եղել զլիիդ:

ԳԱՅԻԱՆԵ — Ելի Բնչ է պատահել քեզ:

ԳԱՍՊԱՐ — Ինչ պատահել է, պատահել է ուրիշին: Ինձ ոչինչ չի պատահել:

ԳԱՅԻԱՆԵ — Ախար մենք քեզ Բնչ ենք արել, Գասպար ջան. ինչու ես այդքան մեղ վրա չարացած,

ԳԱՍՊԱՐ — Լսիր, կախարդ ոստանա: Վճռված է, քեզ նման վարպետ կողջիկը էլ պէտք չէ Օվանէսին:

ԳԱՅԻԱՆԵ — Ի՞նչ է գիտ գիտ դուրս տալիս:

ԳԱՍՊԱՐ — Այո, այո: Զպէտք է խարել նրան: Նա մի մաքուր և անարատ տղայ է: Նա նման չէ մեղ պէս տւագակ ու շառալատան ներին: Նա չպէտք է պսակի քո գեղեցիկ աղջկայ հետ: Հակառակ դէպօռմ ես այս դանակը կիսրեմ նրա փորք և բոլոր աղջիքները դուրս կթափնմ: Աւելի լաւ է մի յիսուն կոպէկանոց սիրուհի ունենայ նա, քան թէ յիմարվի և քո աղջկանդ առնի:

ԳԱՅԻԱՆԵ — Լիրը, անդգամ. ինչպէս ես համարձակվում:

ԳԱՍՊԱՐ — Գնա, աղջկանդ դուրս քաշիր այնտեղից, թէ չէ արինը գլխովս է տալիս: Նայիր, դուցէ հարկաւոր լինի այնտեղ ուղղել...

ԳԱՅԻԱՆԵ — Ո՞ւր է երեխաս:

ԳԱՍՊԱՐ — Այնտեղ է... նրա մօտ...

ԳԱՅԻԱՆԵ — Խելագարւել ես, Աստուած վկայ:

ԳԱՍՊԱՐ — Այո... դու ճիշտ ես ասում. կարող է պատահել որ ես խելագարւեմ: Լսիր զե: — Փուցէ... երբ մերժելու լինեմ Օվանէսին, քեզ հարկաւոր լինի մի պատրուակ: Զէ որ երեկի վարպետն ես սուտեր և պատրուակներ հարելում: Ուրեմն ասա նրան, սրիկայ, դու սիրական ունես: Եւ եթէ քեզ պէտք լինի մի վկայ, ցոյց տուր ինձ վրա: Դէ, շնւռ: Գնա, դուրս քաշիր նրան այնտեղից... (ցած), գուցէ ճմլված լինի անդողինը... ուղղիր, որ աչքերս չտեսնեն:

ԳԱՅԻԱՆԵ — Ինչ յիմարութիւններ է դուրս տալիս: (Գնաց ննջառան): Շուշան, քեզ ինչ եմ ասել:

ՇՈՒՇԱՆ — (Մանում է ննջարանից): Ի՞նչ է, Գասպար իվանիչ, դուք չէք ուզում, որ ես ձեր խաղը նայեմ:

ԳԱՍՊԱՐ — Չեմ ուզում ձեր երեսին նայել: (Գնաց ննջարան):

ՇՈՒՇԱՆ — Անպիտանի աչքերը կատաղած դայլի աչքերի է նման:

10

## ՇՈՒՇԱՆ և ՕՎԱՆԵՍ

ՕՎԱՆԵՍ — (Մտաւ մուտքի դռնով): Բարի երեկոյ, Շուշանիկ: Ի՞նչ է պատահել: Ծնողներս եղել են այստեղ: Նրանք ասացին դու հիւանդ ես, ձմարիտ է: (Ձեռք է տալիս):

ՇՈՒՇԱՆ — Ինչու պիտի հիւանդ լինէինք: Փառք Աստծոյ:

ՕՎԱՆԵՍ — Այդ ինչ եղանակով ես խօսում ինձ հետ: Արի, նստիր ինձ մօտ:

ՇՈՒՇԱՆ — Նստում էք, նստեցէք. ձեղ ով է խանգարում:

ՕՎԱՆԵՍ — Իմ սիրելի, եթէ նեղացած ես, որ ուշ եմ եկել, սըխալուել ես: Ճիշտը ասեմ, — ցերեկով ամաչում եմ, իսկ երեկոները սաստիկ յոդնած եմ լինում, որովհետև ամբողջ օրը սաքի վրա շիտակ կանդնած պիտի լինես: Անհամբեր սպասում եմ, երբ պէտք է կիրակին գայ, որ մի կուշտ հանդիսաւոնեմ: Գժուար բան է, Շուշանիկ: Սրա կապրիզը ապր, նրա երեսին կեղծ ժպտա, միւսի տուած շինծու քաղաքավարութիւն բանեցրու: Խղճիդ ընդդէմ գովիր այն ապրանքը, որ գովասանքի ոչ մի արժանիք չունի: Իմ ընոյթին յարմար գործ չէ, եւ եթէ միանգամ ընկած լինէի, կթքէի և կհեռաւնայի: Ասկայն ես բոլորը հաճոյքով եմ տանում, երբ քեզ եմ յիշում: Ախ ինչ քաղցրութիւն, ինչ երջանկութիւն է, — լինել նշանուած, լինել սիրահարուած և սիրուած: Այնպէս չէ: Շուշան: Բայց դու ինչու ես այսօր ինձնից խորշում ինչու չես մօտենում ինձ: Թէ հայրս ճիշտ էր ասում, թէ առամդէ է ցաւում և կողքդ ծակում:

ՇՈՒՇԱՆ — Ի սէր Աստծոյ, եթէ ուրիշ ասելիք չունեք, վերջացրէք, թէ չէ ես գործ ունեմ:

**ՕՎԱՆԵՍ** — Իմ սիրելիս, մի նեղանաւ: Կուզես առաջվայ պէս դու պառկիր, իսկ ես նստեմ քովդ և նորութիւններ պատմեմ: Գիտես, ես արդէն պարօնիս ականջն եմ քցել, որ շուտով պէտք է պսակւեմ: Ինարկէ, եթէ նա խելօք մարդ է պէտք է ինքը լաւ հասկանայ, ու ոռնիկս աւելացնի: Իսկ եթէ չի աւելացնի, մինենոյնն է ինքը կտուժի, որովհետև մենք գործակատարներս կմիանանք և ուժով կտիպենք: Դու հօրեղաբորդի Արամին ճանաչում ես, նա գործում է մեքենագործարանում և բանտորական շրջաններում մեծ պարագլուխ է համարվում: Թէ ես դեռ ձեռնպահ եմ մնում, բայց նա ամենօր գլուխս տանում է, Գուցէ քեզ համար տախտկալի է իմ այս խօսակցութիւնը:

**ՇՈՒՇԱՆ** — Խնձ համար մինոյն է, ես ձեզ ականջ չեմ դնում: Խօսէք, ինչը ան կուզէք:

**ՕՎԱՆԵՍ** — Ախ գու իմ խորամանգ գեղեցկուհիս: Դու ուզումես ես քեզ հաւատամ: Միթէ չեմ իմանում, որ կատակ ես անում:

**ՇՈՒՇԱՆ** — Զարմանալի է, որ ամենապարզ բանն էլ չէք հասկանում: Ինչ կատակի ժամանակ էք գտել: Ինչ լեզուով խօսենք ձեզ հետ:

**ՕՎԱՆԵՍ** — Թող այդ եղանակով խօսելը: Դու գիտես, որ ես զգայան եմ և այդ կարող է վրաս շատ վատ ազդել:

**ՇՈՒՇԱՆ** — Ուրեմն աւելի լաւ է, ոչինչ չխօսենք: Պրծաւ, գնաց:

**ՕՎԱՆԵՍ** — Քեզ ինչ է պատահել: Միթէ անհնարին է, որ մի շրոպէ ուրախ ժամանակ անցկացնես քո նշանածի հետ:

**ՇՈՒՇԱՆ** — Ձեզ ով ասաց, որ ես ձեր նշանածն եմ:

**ՕՎԱՆԵՍ** — (Ելաւ բռնեց նրա ձեռքը): Դէ լաւ հաշուռենք: (Սարսափած): Այս ինչ է: Ո՞ւր է նշանիդ մատանին:

**ՇՈՒՇԱՆ** — Սպասեցէք, ես իսկոյն կվերադարձնեմ:

**ՕՎԱՆԵՍ** — Սպասիր: Մտածում ես, թէ ինչ ես ասում: Նա միշտ պէտք է մատիդ լինի, Տեսնում ես: (Իր մատանին ցոյց առլով): Կամ յաւիտեան մատիս, կամ կեանքս էլ հետք: Գնաւուրեմն դիր մատանին մատիդ, թէ չէ կնեղանամ Շուշան, և Աս-

տուած վկայ շատ կնեղանամ:

**ՇՈՒՇԱՆ** — Զոռի բան է: Զիմ ուզում:

**ՕՎԱՆԵՍ** — Ես ասում եմ, — այդ բանը քեզ չեմ ների:

**ՇՈՒՇԱՆ** — Միթէ ես իմդիմի տէրը չեմ: Ասում եմ, որ չեմ ուզում:

**ՕՎԱՆԵՍ** — Լսիր, սիրելիս: Ասա այդ խօսքը անզգուշութիւնամբ թռաւ բերնիցդ և ես քեզ կներեմ...: Դէ, ասա, ասա, մի ու շացնի:

**ՇՈՒՇԱՆ** — Ես ոչինչ չեմ ասի:

**ՕՎԱՆԵՍ** — Ո՞չ, չես ասի, Ես քեզ կտիպեմ:

**ՇՈՒՇԱՆ** — Ա՛, բաց թողէք: (Մանում է ննջարանից Գայիանէ):

## 11

**ՇՈՒՇԱՆ**, **ՕՎԱՆԵՍ**, **ԳԱՅԻԱՆԵ**, **յետոյ վերջում** ՇՈՒՇԱՆիկ, **ԳՐԻ-ՌՈՐ**, **ԳԱՅՈԳԱՐ**, **ՄԱՐԴԱՐ** և **այլք**:

**ԳԱՅԻԱՆԵ** — Այդ բնչ է: Ինչ էք անում, **Օվանէս**:

**ՇՈՒՇԱՆ** — Ասում եմ ձեզ, բաց թողէք: (Գնաց ննջարան):

**ՕՎԱՆԵՍ** — Ի՞նչ է անում ձեր աղջիկը, ի՞նչ է ասում ձեր աղջիկը:

**ԳԱՅԻԱՆԵ** — Ել ինչ պիտի լինի, որդի: Չեմ իմանում որ շար կախարդն է գիր արել երեխիս: Աչքերին բաններ են երեսում: Քնի մեջ մեռների հետ է խօսում: զարհուրանք է բերում վրա-ներիս: Ասածոյ սիրուն, ինչ տուել էք, վեր առէք զնացէք: Աշխարհը խաւարեց մեղ համար, երեխսս ձեռքիցս գնում է...

**ՕՎԱՆԵՍ** — Սա ինչ փափոխութիւն է: Զառացանքի մէջ եմ, թէ երաղ է ողջ տեսածու, լսածու:

**ԳԱՅԻԱՆԵ** — Միթէ չլսեցիք նրա անկապ-անկապ խօսքերը: Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթէ նա խելագարուի:

**ՕՎԱՆԵՍ** — Անիծուի չար կախարդի գլուխը:

**ԳԱՅԻԱՆԵ** — Օ լսեցէք դուք, որին ես այնպիսի անոյշ եղանակով մայր էր կոչում, եթէ այդ չար կախարդը դուք ինքներդ չէք, զնացէք և իսկոյն խելքի բերէք ձեր աղջկան: Հասկացրէք նրան, որ սա իմ առաջին և վերջին մաքուր ու անարատ սէրն է:

Ասացէք, խելքի բերէք, Ես կներեմ և ձեզ... միայն թէ խղճացէք ինձ,

ԴԱՅԻԱՆԷ — Ես Բնչ կարող եմ անել. Ինչու էք ինձ շ կրտկի մէջ այրում:

ՕՎԱՆԷՍ — Դուք ոչինչ չէք կարող անել, Դուք որ մայր էք...  
(Բռնեց նրան):

ԴԱՅԻԱՆԷ — Բաց թողէք ինձ, ես մայր չեմ.

ՕՎԱՆԷՍ — Ապա ինչ էք, ով էք:

ԴԱՅԻԱՆԷ — Հիմայ որ աղջիկն է մայր ընդունում, որ նա ընդունի.

ՕՎԱՆԷՍ — Այն ժամանակ ուրեմն կխօսեմ հետը Ես: (Ուզում է մտնի ննջաըսն):

ԴԱՅԻԱՆԷ — Մի մտնէք այնտեղ, Այնտեղ մեր հիւրերն են հաւաքված:

ՕՎԱՆԷՍ — Դէ գոնէ ասացէք ինչ է պատճառը, Ում սատանայական չար լեզուն է մոլորեցրել ձեր միտքը, ով է համարձակվել իմ ոտքիս տակի հողը փորել:

ԴԱՅԻԱՆԷ — Շատ լաւ, Որ ստիպում էք, լոէք, տսեմ: Մենք ձեզ նից այդպիսի բան չէինք սպասում:

ՕՎԱՆԷՍ — Ի՞նչ բան:

ԴԱՅԻԱՆԷ — Այս, ես իմ աղջիկը մի սիրուհի պահողի համար չեմ միծացրել:

ՕՎԱՆԷՍ — Թոր շան ծնունդս է համարձակուել:

ԴԱՅԻԱՆԷ — Խօսք տուէք, որ իմ տան մէջ խայտառակութիւն չէք սարքի և ես ձեղ կասեմ, որ ասողը ձեր ամենամտերիմ ընկերն է... (Մօտեցաւ դռան):

ՕՎԱՆԷՍ — Ուրեմն նա այստեղ է... (Հրում է մի կողմ գայիշնէ-ին, որ ուզում էր արգելել նրան): Հեռացէք ասում եմ ձեզ (Խփում է, ննջարանի գոները բացվում են): Է՞յ, ով է համարձակվել ինձնից չարտխօսել...

ԴԱՅԻԱՆԷ — (Գասպարին որ թղթերը ձեռին առաջ է եկել որին հետևել են բոլոր միւս խաղացողները, Շուշանիկը): Դէ, առւք նրա պատասխանը:

ՕՎԱՆԷՍ — Ի՞նչ... Նա է ասել, Դու ես ասել, Գասպար, դմւ:

ԴԱՅԻԱՆ — (Խորհրդաւոր, դառն ծիծաղով): Հը հը հա հա հա.

այո... եռ... Օվանէս:

ՕՎԱՆԷՍ — Դու, դու... (Բռնում է երեւը, յետյետ գնում, ընկնում մի աթոռի վրա):

Մի նայիր ինձ... մի նայիր... (Գատսպարի ձեռքից թափվում են թղթերը):

ՄԱՐԳԱՐ — Է՞ն, խաղներս էլ խանգարեցիք:

Վերջ առաջին արարի:

## Ա Ր Ա Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Բակ: Աջ կողմանի մի դուռ և մի պատուհանով տնակ, որի առաջ գետնից քիչ բարձր պատշզամբ: Պատի ձախ կողմը պարտէլզ: Խոր քում կօշկակարի սեղան, վրան գործիքներ և այլն: Սեղանի չորս կողմը տարութեաների վրա նստուած են կօշկակարներ: Մէջտեղի պատի վրա արհեստանոցի ետեր դուռը և մի պատուհան: Գարնանային տաքի պատճառով գործում են բակում: Խանութիւն ներսի կողմից եկողները նախ երեսում են պատուհանից: Պարտիզի հնացած ցանկապատի վրա ծառերից մինչև պատշգամբի սիւնը կապւած թուկի վրա չորանալու համար կախված է լուսագր: Երեկոյէ մութը կոխելու ժամանակն է: Հեռուից լսվում է զանգի ձայն և տախտակի վրտ կաշի ծեծելու ձայն, որոնք յետոյ լուռմ են: Շաբաթ երեկոյ է: Ցանկապատի մէջ բակ մտնելու դուռ:

Կաշին ծեծում էր ՅԱՐՈՒԹԻՒՆԸ. ՕՎԱՆԵՍԸ պատշգամբի յենարանին նստած ծխում է: Նա գունատ է, մուայլ, գզգզված, թողնում է ապուշի տպաւորութիւն: ՄԱՐԻԱՆԸ տնտղում է լու ածքը և հաւաքում: ԱՐՄԵՆԱԿԸ և միւս կօշկակարները չեն գործում, գաղտնի քչիչ մէջ են, Քիչ-քիչ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ենում է:

1

ՕՎԱՆԵՍ, ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՄԱՐԻԱՆ, ԱՐՄԵՆԱԿ և կօշկակարներ.

ՄԱՐԻԱՆ — Ապա ինչ ասեմ, որդի: Վաղ առաւոտեան վեր էիր կենում անկողնից ու գնում գործիդ: Ուշ երեկոյեան ուրախուրախ առւն էիր վերագաղտնում: Ծնողդ էլ տեսնում էր, ու

բախմանում: Փառք էր տալիս Աստծուն, որ հասած որդի ունի, որ սկ օրի համար յուսատեղի ունի:

ՕՎԱՆԵՍ — Դէ բաւական է, մայրիկ: Գոնէ մի օր թողէք ինձ հանդիստ մնամ: Միթէ ամեն օր միւնոյնը կրկնելով չկտացաք: Հաւատացնում եմ, եթէ շարունակելու լինէք, զլուխ վեր կառնեմ ու կի շխչեմ այս քաղաքից:

ՄԱՐԻԱՆ — Զէ որ մեր հոգմն ու ցաւը դու ես: Զէ որ իմ աչքի մեն ու սպիտակը դու ես: Միթէ քեզ այսօրվայ համար եմ մեծացրել: Ով կկարծեր որ մեր որգին գիշելները հարբած ուշ պիտի վերադառնայ տուն: Քար հօ չէ սիրու: Զէ որ սկ կապոյտ մայր եմ: Ինչ անեմ, որ չը խօսեմ: Ինչ անեմ որ չեմ կարողանում դիմանալ:

ՕՎԱՆԵՍ — Ոչինչ, կեանքումս շատ եմ ծաղրել կեղծ վշտից արբեցողների վրա, հիմայ հերթը ինձ է հասել: Բայց իմ վիշտի կեղծ չէ, մայրիկ...

ՄԱՐԻԱՆ — Ախ, Օվանէս: Աւելի լաւ է կրակ տաս, սպանես ինձ, քան քո բերանից այդ տեսակ խօսքեր լսեմ: Խղճա ինձ, խրդանա հօրդ: Միթէ աշխարհը քանդվեց քեզ համար:

ՕՎԱՆԵՍ — Ով է ասում. Ընդդահակառակը՝ նա բացել է բախտի դուռը ու համեցէք է անում մեղ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — (Քիչ քիչ մօտեցել է): Մարեան ինչու համար ես խօսեցնում նրան:

ՄԱՐԻԱՆ — Ապա ինչ անեմ, ջուր տարած, միթէ ծնող չեմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Նա ինչ գիտէ, թէ ինչ ասել է, --ծնող:

ՄԱՐԻԱՆ — Մի անհան աղջկայ պատճառով սկ է արել մեր օրն էւ իր օրն էլ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Դու կարծում ես այս պատմութիւնը մի աղջկայ պատճառով է: Զէ, Մարիան: Պատճառը այն է, որ նա սիրունի, —ուրիշի համար այրուող սիրու: Պատճառը այս պատճառած ժամանակն է: Մէկ աչք բաց, տես ինչ սերունդ է կանուած ժամանակն է: Ամենքը ոտքի են կանգել: Ամենքը, —աչքները արիւն կոխած, —իրաւունք են բղաւում: Ուզում են ոչինչ չա-

բած՝ ապրել ազատ, ապրել անհոգ,—ինչպէս երկնքի թռչունը  
(Յոյց տալով իր բանւորնեղի վրա): Ահա, որա կտորը նրանք  
չեն: Սրանք բոլորը մի խմբից են հունված: Եւ ես երեսնե-  
րին եմ ասում.—խօսքով երկնքից ասաղ վայր կրերեն, իսկ  
ձեռքով.—եթէ հնար լինի, փետուր չեն ուզի շարժի:

**ՄԱՐԻԱՆ** — Դէ լաւ դու էլ այս ժամաժամքին այն խեղճերին մէջ  
տեղ մի խառնի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ապա ինչ անեմ, երբ ոտնակոխ է եղել և օրէնք  
և կարգ: Երբ էլ ոչ մեծ կայ, ոչ փոքր: Նայիր, տես այն փը-  
չանալու Մարգարն էլ գլխիս ինչ է բերել: Վաղը առաւո-  
կոշիկ պիտի յանձնեմ, կօշիկը պատրաստ, իսկ նա կրունկ կա-  
պելը թողել է, և առաւուեան ժամը 11-ից կորել է, չկայ: Եւ  
ով է սրանց ամենքին խելքից հանողը,—իմ հարազատ եղբօր  
որդին, այն փչանալու Սրամը:

**ՕՎԱՆԵՍ** — Նրան էլ չես հաւանում: Նրան՝ որ իր անձը, իր շահը  
մոռացած միմքայն ուրիշների հոգմն է քաշում: Որ հազար ու  
մի վտանգ աչքի տակ առած, համարձակ կերպով կոփւ է մը-  
դում անարդարութեան դէմ:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ինչու չես մի փոքրիկ երեխայ, որ բոնի ական  
ջիցդ և ապահելի բերանիդ:

**ՕՎԱՆԵՍ** — Նրա համար, որ ծշմարիտ խօսք ասացի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Նրա համար, որ լիշեցնէի քեզ քո չափը: Եթէ դու  
լինէիր մի ճնճղուկի ձագ, վաղուց քեզ ասած կլինէի:—Բա-  
ւական է, որքան պահել—մեծ ացրել եմ քեզ: Այժմ, երբ թեն-  
ըթ աճել են, երբ ինքնազլուխ կարող ես թռչել, զնա, թռի՛  
այլնս մեր մէջ ոչ մի կապ չկայ: Բայց աստուածութիւնը քեզ  
բանական մարդ է ստեղծել: Ուրեմն մտածիր, մինչև հիմու-  
ինչ ես եղել մեզ համար, —փայտի ձի՝ որին հեծնողը—ինքը  
պիտի քաշի առաջ: Ահա մեծացրել ինչ հասակի ենք հասցրել  
քեզ, բայց ինչ օգուտ ենք ստացել քեղնիթ մեր կեանքում:  
Առա ինձ, միթէ կամնում ես հիմոյ էլ թքել այն ջրհորի մէջ՝  
որտեղից 27 տարի շարունակ ջուր ես խմել: Ինձ չես խղճում,

խղճա սրան: Նայիր, ինչ օրի է հասել:

**ՕՎԱՆԵՍ** — Քեզ ով ասաց, որ ես ձեզ չեմ խղճում:  
**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ծաղբիր, ծաղրիր մեզ: Հմ: Զհոքերս դողում են:  
Հաղիւ եմ կարողանում գործիք բռնել: Ահա, գնա, տես: Մի  
կրունկ կապելու հաւար մարմնիս մէջ ոյժ չի մնացել: Ես  
կարծում էի թէ մի օր վերջապէս կզաս, կկանգնես քո զա-  
ռամեալ հօր առաջ, և կասես:—«Հայր, բաւական է, 50 տա-  
րի շատ ատամներով կաշի ձգելով ատամներդ են թափվել,  
շատ կռացած գործելուց աչքերիդ լոյսն է նուազել, և թիակ-  
ներիդ ոսկորները դաւրս ցցուել: Բաւական է, գնա և կեան-  
քիդ վերջին օրերը մի քիչ էլ դու հանգստացիր, որովհետեւ  
յօդնել ես»:

**ՕՎԱՆԵՍ** — Եւ դու իրաւունք ունես հանգստութիւն պահանջելու:  
Եւ բոլոր քեզ նմանները իրաւունք ունեն:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ուրեմն ինչու ես ինձ սրանց ձեռքին գերի շինել:  
(Քիմելով բանւորներին) Եյ, վառեցէք մոմերը: (Բանւորնը ը-  
լվառեցին եկեղեցական մի քանի մոմեր և տնկեցին գործիք  
ուեղանի վրա),

**ՕՎԱՆԵՍ** — Բայց միթէ ես այդպէս էի և առաջ: Միթէ մոռացել  
էք, որ կար ժամանակ, երբ ես էլ էի ոսկի երազներ տեսնում:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Իսկ հիմայ ինչ է խանգարել քո քունը:

**ՕՎԱՆԵՍ** — Եւ այդ հարցնում ես դռւ, որ բոլորի պատճառը  
եղար:

**ՄԱՐԻԱՆ** — Նա ինչ անէր որդի, Նա հօ քո վատը ուղելով չարաւ:  
Նրանում ինչ մեղք կայ, երբ մենք աներեսների հանդիպեցինք:  
Սև լինէր այն օրը, որ չանդիպէինք: Հիմայ ինչ անենք. վեր  
կեսանք, մորթինք նրանց:

**ՕՎԱՆԵՍ** — Իսկ նրանց արածը, մայրիկ: Միթէ սա առանց դա-  
նակի մորթելուց մի բանով պակաս է:

**ՄԱՐԻԱՆ** — Աստուած մի արացէ, որդի նրանք հօ քեզ չեն սպա-  
նել:

**ՕՎԱՆԵՍ** — Աւելի լաւ է մարդուն սպանել, քան կենդանի թաղել:

բաժ՝ ապրել ազատ, ապրել անհոգ, —ինչպէս երկնքի թռչունու (Յոյց տալով իր բանորդների վրա): Ահա, սրա կտորը նրանք չեն: Սրանք բոլորը մի խմորից են հունըված: Եւ ես երեսներին եմ ասում, —իմուլով երկնքից առաղ վայր կրերեն, իսկ ձեռքով, —եթէ հնար լինի, փետուր չեն ուզի շարժի:

**ՄԱՐԻԱՆ** — Դէ լաւ դու էլ այս ժամամամքին այն խեղճերին մէջ տեղ մի խառնի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ապա ինչ անեմ, երբ ոտնակոխ է եղել և՛ օրէնք և կարգ: Երբ էլ ոչ մեծ կայ, ոչ փոքր: Նայիր, տես այն փը չանալու Մարգարն էլ զլիմիս ինչ է բերել: Վաղը առաւօս կօշիկ պիտի յանձնեմ, կօշիկը պատրաստ, իսկ նա կրունկ կապելը թողել է, և առաւօտեան ժամը 11-ից կորել է, չկայ: Եւ ով է սրանց ամենքին խելքից հանողը, —իմ հարազատ եղբօր որդին, այն փչանալու Արամբ:

**ՕՎԱՆԻՍ** — Նրան էլ չես հաւանում: Նրան՝ որ իր անձը, իր շահը մոռացած միմիայն ուրիշների հոգսն է քաշում: Որ հազար ու մի վտանգ աչքի տակ առած, համարձակ կերպով կռիւ է մը զում անարդարութեան դէմ:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ինչու չես մի փոքրիկ երեխայ, որ բռնէի ականց լիցու և ապտակէի բերանիդ:

**ՕՎԱՆԻՍ** — Նրա համար, որ ճշմարիտ խօսք ասացի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Նրա համար, որ իշեցնէի քեզ քո չափը: Եթէ դու լինէիր մի ճնշդուկի ձագ, վաղուց քեզ ասած կլինէի: —Բաւական է, որքան պահել —մեծ ացրել եմ քեզ: Այժմ, երբ թեւըդդ ածել են, երբ ինքնազլուխ կարող ես թռչել, գնա, թոփր այլսս մեր մէջ ոչ մի կատ չկայ: Բայց աստուածութիւնը քեզ բանական մարդ է ստեղծել: Ուրեմն մտածիր, մինչև հիմոյ ինչ ես եղել մեզ համար, —փայտի ձի՝ որին հեծնողը —ինքը պիտի քաշի առաջ: Ահա մեծացրել ինչ հասակի ենք հասցընք: Քեզ, բայց ինչ օգուտ ենք ստացել քեղնից մեր կեանքում: Ասա ինձ, միթէ կամենում ես հիմայ էլ թքել այն ջրհորի մէջ՝ Ասա ինձ, միթէ կամենում ես հիմայ էլ թքել այն ջրհորի մէջ՝ Ասա ինձ ոգուտ ենք ստացել քեղնից մեր կեանքում: Ասա ինձ շարունակ ջուր ես խմել: Ինձ չես խղճում:

լսղձա սրան: Նայիր, ինչ օրի է հասել: ՕՎԱՆԻՍ — Քեզ ով ասաց, որ ես ձեզ չեմ խղճում: ՅԱՐՈՒԹԻՒՆ — Մաղրիր, ծաղրիր մեզ: Զհոքերս դողում են: Հազիւ եմ կարողանում գործիք բռնել: Ահա, գնա, տես: Մի կրունկ կապելու հաւար մարմնիս մէջ ոյժ չի մնացել: Ես կարծում էի թէ մի օր վերջապէս կգաս, կկանգնես քո դառամեալ հօր առաջ, և կասես: — «Հայր, բաւական է, 50 տարի շատ ատամներով կաչի ձգելով ատամներդ են թափվել, շատ կուացած գործելուց աչքերիդ լոյսն է հուազել, և թիակներիդ ուկորները դաւրս ցցուել: Բաւական է, գնա և կեանքիդ վերջին օրերը մի քիչ էլ դու հանգստացիր, որովհետեւ յօդնել ես»:

**ՕՎԱՆԻՍ** — Եւ դու իրաւունք ունես հանգստութիւն պահանջելու: Եւ բոլոր քեզ նմանները իրաւունք ունեն:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ուրեմն ինչու ես ինձ սրանց ձեռքին գերի շինել: (Քիմելով բանորդներին) Եյ, վառեցէք սոմերը: (Բանորդները վառեցին եկեղեցական մի քանի սոմեր և տնկեցին գործիք սեղանի վրա):

**ՕՎԱՆԻՍ** — Բայց միթէ ես այդպէս էի և առաջ: Միթէ մոռացել էք, որ կար ժամանակի երբ ես էլ էի սոկի երազներ տեսնում:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Իսկ հիմայ ինչ է խանդարել քո քունը:

**ՕՎԱՆԻՍ** — Եւ այդ հարցնում ես դու, որ բոլորի պատճառը եղար:

**ՄԱՐԻԱՆ** — Նա ինչ անէր որդի: Նա հօ քո վատը ուղելով չարաւ: Նրանում ինչ մեղք կայ, երբ մենք աներեսների հանդիպեցինք: Սև լինէր այն օրը, որ չանդիպէինք, Հիմայ ինչ անենք. վեր կենանք, մորթինք նրանց:

**ՕՎԱՆԻՍ** — Իսկ նրանց արածը, մայրիկ: Միթէ սա առանց դանակի մորթելուց մի բանով պահես է:

**ՄԱՐԻԱՆ** — Աստուած մի արասցէ, որդի նրանք հօ քեզ չեն սպանել:

**ՕՎԱՆԻՍ** — Աւելի լաւ է մարդուն սպանել, քոն կենդանի թաղել:

Նրանք ինձ փակել են տան անկիւնում: Ամբողջ քաղաքի ծաղրի առարկան են շինել: Աղատ աղատ թռչում էի օդի մէջ՝ նրանք կարտեցին թեերս, նետով խփեցին ւրտիս մէջտեղին: Իսկ դուք... որդիական պարտքի մասին էք յիշեցնում: Այս եւ չեմ մոռանում, որ որդիական և ծնողական պարտքը կայ և պիտի լինի: Բայց բացի որդի լինելուց ես և մարդ եմ... մի վիրաւորուած-անպատուած մարդ: Եւ ինչ պահանջեմ ձեզնից երբ վաղուց է արիւնը սառել ձեր երակների մէջ:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Իսկ գու, որ արիւնդ եռում է երակներիդ մէջ ի՞նչ պիտի անես:

**ՕՎԱՆԵՍ** — Ոչինչ...: Ահա դուք ինքներդ էլ տեսնում էք, պատիւ ցեսի հետ հաւասարուելուց յետոյ էլ, ես ձեռքերս ծալած մնացել եմ նստած:

**ՄԱՐԻԱՆ** — Հեռացրու քեզնից չար մտքերը! Փառք տնուր Աստծոյ, որ այդպէս է պատահել:

**ՕՎԱՆԵՍ** — (Սթափուած): Ի՞նչ...

**ՄԱՐԻԱՆ** — Թող տակը-տակ, զլուխը-զլուխ, մնայ այս բանը: Այս կիրակնամուտին ինչ կպատկանի մարդկանցից չարախօսել:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Մեղաւոր ես Մարիան: Դու պարտաւոր էիր ժամանակին բանալ թէ իմ, թէ սրա աչքը:

**ՕՎԱՆԵՍ** — Ա՛ մայր... հասկանում եմ...: — Ինձ մխիթարելու, զլիսին տակ փափուկ բարձ զնելու մոքավ ես հնարում այդ սութը:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Զափ դիր լեզուիդ: Ինչպէս ես համարձակվու նրան ստախօս անուանել:

**ՄԱՐԻԱՆ**, — Աստծոյ սիրուն, մի կռուէք: Առանց այն էլ երեխայիս սիրու դառնացած է:

**ՕՎԱՆԵՍ** — Ա՛ն, ձեզ հետ զլուխ անողը դժուել կարող է, գժուել: (Բարկացած գնաց սենեակի դռնով):

**ՅԱՐՈՒԹԻՒՆ**, — (Նրա ետեից), Առ ես սովորել Սրամից: Սպասեցէք անզգամներ:

**ՄԱՐԻԱՆ** — Մարդ, ինչո՞ւ ես կրակի վրա իւղ ածում: Արամին ես ինքս եմ խնդրել, որ մէկ-մէկ գայ, խօսի հետը: Լեզուիդ:

աէրութիւն անել չես կարողանում, էլի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ճշմարիտ ես ասում Մարիան: Գնա ետեից, գնա, փաղաքչիր, սիրու առ: Տեսնում ես, որ պառաւել եմ, խեղս տանուլ տուել:

**ՄԱՐԻԱՆ** — Ոչ խօսածդ ես հասկանում, ոչ արածդ: (Գնաց սենեակի դռնով):

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Խօսում ես վայ է չես խօսում՝ վայ: Իսկ դուք, ինչո՞ւ էք բերաններդ ծռել, պարապ նստել:

**ԱՐՄԵՆԱԿ** — Ապա ինչ անհնդ: Զէ որ շաբաթ երեկոյ է, պէտք է տուն գնանք:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Իսկ քեզ գործ յանձնեցի, ինչ արիր: (Խլում է մէկի ձեռքից գործը): Այդ ինչ է: Մի կրունկ կապելն էլ չես կարողացել: Նոյն խկ ձեռք էլ չես տուել:

**ԱՐՄԵՆԱԿ** — Նա ինչո՞ւ պիտի անէր: Մարդաբը սկսել է, թող ինքըն էլ վերջացնի:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Քեզ ով է բան հարցնում: (Շպրտում է կոշիկը մի կողմ): Ես նրա հետ եմ խօսում և ոչ քեզ հետ:

**ԱՐՄԵՆԱԿ** — Մինքնոյն է: Մենք ամենքս էլ մէկ ենք:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Հա: Այդ որ օրից ես սկսել այդպիսի լեզու բանեցնել: Ուրեմն խօսքներդ մէկ էք արել, հա: Ուրեմն վճռել էք, երեսին կանգնել. հա: Բայց ասացէք ինձ, — ինչո՞ւ էք Աստծոյ աչքից ընկել: Խիստ եմ եղել ձեղ հետ ասացէք, — հա, խիստ ես եղել: Վատ եմ եղել. ասացէք, — հա, վատ ես եղել:

**ԱՐՄԵՆԱԿ** — Ով է ասում, որ վատ մարդ էք:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Ուրեմն եթէ լաւ եմ եղել, ինչո՞ւ էք ոտքներդ բարձրացրել: Ասացէք, տեսնեմ, սա ինչ ապստամբութիւն է:

**ԱՐՄԵՆԱԿ** — Ինչո՞ւ պիտի ապստամբուենք: — Ինչպէս ուրիշները, այնպէս էլ մենք:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ** — Հա, Արմենակ. ինչպէս ուրիշները, այնպէս էլ դուք: Ինչո՞ւ, ուրեմն, օրինակը ինձնից չեք վերցնում: Զէ որ աշակեր տը պարտաւոր է օրինակը իր վարպետից վերցնել: Ահա, լսեցէք: Եօթ տարի աշակերտ ժամանակս օրական զործել եմ 16 ժամ:

(Տղերքը արտնջում են): Ապագետիս տան բոլոր գործերը եմ եմ արել: Քիչ է մացել տան շորերն էլ ինձ լուանալ տան: (Նոյն): Ամիսներով զլուխս տաք ջրի և սապօնի երես չի տեսել: Ձմեռը ցրտից սասառելով քնել եմ խանութի ետեռում: Կեղտոտ անկողնում: Միշտ շորերս պատռտուած է եղել, մարմինս աղտոտուած, բայց երբեք ուփ չեմ արել: Չարչարուել եմ շան նման, և շան նման էլ տիրոջս հաւատարիմ եմ եղել: Իսկ դուք: Դէ խնդրում եմ, մի րոպէ համեմատեցէք ձեզ ինձ հետ:

ԱՐՄԵՆԱԿ — Մի նեղանաք, վարպետ: Այդ բոլորը անցած ժամակի բաներ են: Տղերքը միացած, ասում են, — «մենք այդպէս չենք ուզում, որովհետեւ մենք էլ մարդ ենք մենք ուզում ենք մարդավարի կեանք ունենալ».

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ել ինչ մարդավարի կեանք: Փառք տուեք Աստծուն, որ կեանքներումդ բերանիցս վատ խօսք չէք լսել, որ ես ծեծող ու չարչարող վարպետներից չեմ եղել:

ԱՐՄԵՆԱԿ — Եւ շատ էլ լաւ էք արել որովհետեւ ծեծում են միայն անասունին, իսկ մարդը անասուն չէ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ուրեմն ձեր ասելով այսուհետեւ էլ աշակերտին ձեռք տալ չի կարելի:

ԱՐՄԵՆԱԿ — Իհարկէ ոչ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Քեզ ով է սովորցրել այդ բաները:

ԱՐՄԵՆԱԿ — Ով պիտի սովորցնէր: Մենք կարդացել ենք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Սուտ էք ասում: Դուք չեք կարդացել, այլ լսել էք իմ եղբօրորդի Արամից: Զեզ ամենքիդ էլ այն անպիտանն է մոլորեցրել:

ԱՐՄԵՆԱԿ — Իզուր էք նրան մեղադրում: Հօ ամբողջ Եւրոպան Արամի ձեռքին չէ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Լոիր անպիտան: „Եւրոպա“: Հմ: Դուք մոռանում էք, որ ես կհեռացնեմ ձեզ ամենքիդ էլ:

ԱՐՄԵՆԱԿ — Խչպէս կամենաք.

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ի՞նչ: Դուք չեք վախենում: Դուք կարծում էք ես

կաւակ եմ անում: Ոչ: Ես ասում եմ: — կհեռացնեմ ամենքիդ և ձեր տեղ նորերին կվարձեմ:

ԱՐՄԵՆԱԿ — Սիսալում էք ձեզ մօտ ոչ ոք չի գալ: Այս մի զարմանաք, վարպետ: Սա վճռւած բան է: — Ոչ ոք չի համարձակուի: ՅԱՐՈՒԹԻՒՆ — Իսկ եթէ նրանք գիտեն, որ ես քաղաքի մէջ ամենաառաջին կօշկակարն եմ: Եթէ ցոյց տամ, որ նրանց ահազին գործ կտամ:

ԱՐՄԵՆԱԿ — Դուք ոչ մի գործ չեք ունենայ: Այս: Մենք ձեր դէմք բօյկօտ կյայտարարենք այդ մասին կիմանայ ամբողջ քաղաքը և ոչ ոք ձեզ մօտ պատուէր տալու չի գալ, չի համարձակուի գալ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ուրեմն ամբողջ քաղաքն էլ ձեր ձեռքին է:

ԱՐՄԵՆԱԿ — Այդպէս են ասում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Շատ լաւ: Կաեսնենք: Ինձ տուող Աստուածը առանց ձեզ էլ կտայ:

ԱՐՄԵՆԱԿ — Եթէ տուողը նա էր և ոչ թէ մեր այս ձեռքերը, ապա ինչու երբ գարնան գործազուլ արինք, չտուաւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Չայնդ, սրիկայ — լակոտ: (Խանութի գոնից եկաւ Մարգար քիչ խմած):

## 2

ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԱՐՄԵՆԱԿ ՄԱՐԳԱՐ և միւսներ:

ՄԱՐԳԱՐ — Հէ հէյ վարպետ Յարութիւն, բարի երեկոյ: Այդ ինչ լաւ էք արել: Հին սովորութեան համեմատ մոմեր էք վառել: Այդ լաւ է, ժամ զնալու նեղութիւն չենք քաշի: Լաւ, լաւ, Աչք, ունք մի անի վրաս: Ուրախ լուր եմ բերել: Խնամիդ եւ կել է, ուզում է քեզ հետ հաշտուի: Աչքդ լոյս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Քեզ ով ասաց, Մարգար, որ ես խնամի ունեմ:

ՄԱՐԳԱՐ — Վահ, ինքը Սահակ քեռին էլի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Գլուխը քարով է տալիս:

ՄԱՐԳԱՐ — Ասենք այսօր իմ զլիումն էլ մի առանձին խելք չի մնացել, բայց նա բոլորվին է իրան կորցրել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Աւելի լաւ է խօսես քո մասին։ Պատմիր տեսնենք  
որտեղ էիր ամբողջ օրը։

ՄԱՐԳԱՐ — Փորացաւ էի ընկել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Սուտ ես ասում, Մէկ մռածիր ինչ օրինակ պիտի  
լինես այս երեխաների համար։

ՄԱՐԳԱՐ — Օչ ո հո հո, ինչ երեխաներ են։ Մէկ փարձիր ժամդ զիր  
բրաններին, շան պէս կիսածնեն, ու այն ժամանակ կիմանաս  
ով է երեխան։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Այս, ինչ էլ լինի, բայց երեխաներ են։ Եւ վայ նը-  
րան ով մոլորեցնում է նրանց։

ԱՐՄԵՆԱԿ — Իսկի էլ մենք երեխաներ չենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ի՞նչ, ուրեմն զուք ձեզ մնձերի հաշումն եք դում,  
զուք ձեզ մեծ էք համարում։ Խոնում ես Մարգար։

ՄԱՐԳԱՐ — Դու նրանց հոգոը մի քաշի, վարպետ։ Սրանք ինձ  
ու քեզ նման չեն։ Այն վաղ էր, որ էշը կաղ էր, Տեսնում ետ  
Փորձիր մէկին խփել և կտեսնես բոլորն էլ տըտինդ տուին  
Զգոյշ։ Պատահած տեղը քացի էլ կիսեն և Աստուած մի ա-  
րասցէ, ատամներդ էլ փորդ կթափեն։ Տեսնում ես այս լակո-  
տին։ (Արմենակին) 0՝ լեզուով մեզ նման քառասունին ջուրը  
կտանի ու ծարաւ յետ կբերի, կատակ բան չիմանաս, վարպետ  
Յարութիւն, «ցացիալ դամկուատներ» են։ «Մէկը ամսնըի, ա-  
մսնքը մէկի համար»։ Հույ աւազակներ։ Տես ունքերի տակից  
ինչպէս են նայում վրաս։ Հույ խոզի ճուտեր։ (Երանք ծիծա-  
ղում են)։ Փնտստ, անպիտաներ։ Ինչպէս էք համարձակվում  
ձեր մեծի վրա ծիծաղել։ Ասենք՝ ինչ եմ յիմար յիմար դուրս  
տալիս։ չը որ սրանցում ոչ մեծ կայ, ոչ փոքր։ Սրանք ամեն  
քն էլ «ընկերներ» են, չմ, ինձ էլ են ընկեր Մարգար» կոչուա-  
խոկ պարոն, սրանք էշն են ասում։ Հա հա հա։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Քան թշերդ կարմրացընել, եկել այստեղ, աւելի  
լաւ կանէիր այս դրութեան մէջ տուն գնայիր, ու պառկէիթ՝

ՄԱՐԳԱՐ — Բայց ինձ փող է հարկաւոր։ Հաղար ու մին ցաւ ու-  
նեմ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ա՛, վաղուց ե պատրաստ փողու։ Համեցէք, (Տա-  
լիս է 10 ըուբլանոց)։ Երենին մարդ ես։ Շարաթի վեց օրը  
գործում ես, իսկ յետոյ վաղում թուղթ խաղում, արբեցողու-  
թիւն անում։

ՄԱՐԳԱՐ — Բայց այսոր ես արբած չեմ։ Այսօր ես կատարել եմ  
մի քրիստոնէական պարագ։ Եւ գերեզմանանից եմ գալիս։

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ինչու համար էիր գնացել։

ՄԱՐԳԱՐ — Դնացէլ էի տեսնելու այն, ինչ որ այս կեանքում եր-  
բեք չենք տեսնելու։ Էլ ըն—կեր—ներ, զուր էք երբեմն քաղ-  
ցըր երազներով ինձ էլ խենթացնում։ Սուտ է բոլորը։ Զեր  
երազածը այնտեղ է։ Այնտեղ է և հաւասարութիւնն և եղբայ-  
րութիւնն և յափանական հանգիստ։ Է՞ն, վարպետ, մի նեղա-  
նայ, կեանքը այս պրիչակում այնքան տիտուր է, այնքան միա-  
տեսակ, որ երբեմն քիչ է մնում սիրաս տրաքուր։ Ամենայն  
օր միենոյն կաշիի անուշահոտութիւնը, Միշտ միենոյն սև ներ-  
կը, Միշտ այդ հոտած խոզի մազը, այդ ապակիի կտորները։  
Մրա—նրա ստքի տակ փոռելու, ինչ թագցնեմ, վարպետ։ Ա-  
ռաւտահաննից սիրաս լցուած, ականջս սրբել մնուելի զանգի  
էի սպասում, որ մէկ դուրս զամ քաղաքի այս ազմուկից ու  
զերեզմանատուն զնամ։ Եւ թնչ։ Հենց որ առաջի ողորմաթա-  
սը քամեցի, հենց որ փորս ու զլուխս տաքացան, — այս ճարգ-  
ուերը վկայ, սուտ սուտ այնպէս էի բղաւում, — «Աստուած ու-  
զորմի», որ կարծու մառելաթաղ չէր, առ ուրախ հարսանքը,  
ՅԱՐՈՒԹԻՒՆ — Է՞ն վերջադրի։ Բաւական է։ Ել զլուխ չունիմ  
դատարկախօսութիւնդ լսելու։

ՄԱՐԳԱՐ — Այ, հենց այդ խիստ բնութիւնդ է, որ ամնիքին ոտ-  
քի է կանգնեցրել է։ Հեր օրհնած, մօտղ ոչ խօսել կարելի է,  
ոչ ծխել, ոչ երջել, թուշունը, որ վանդակի մէջ զերի է, եր-  
գելու իրաւունքից չի զրկուած, երգով նա իր վիշտը թեթեա-  
ցնում է, իսկ զու այդ իրաւունքից էլ մարզկանց զբկում ես։  
ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ուրիմն զուք կուզէիք մօտս և ծխէիք և մինչեւ ան-  
գամ երգէիք։

ՄԱՐԴԱՐ — ԵՇ, ԻՆՉ ԿԱՊԱԿԱԾԵՐ: Ես ԿԵՐՊԵՐ ԿՕՉԿԱԿԱՐԱԿԱՆ ՀՅ  
ԵՐԳԸ, ԻՍԼ ԱՅՍ ԵՐԵՒԱՆԵՐՆ ԷԼ ԿՈՎԱԽԱՆԱՋԻՆ:

Թախիկ, ԽՓԵՐ ԿՕՉԿԱԿԱՐՆԵՐ,  
ԳԻՇԵՐ ԵՐԵԿ, ԿՕՉԿԱԿԱՐՆԵՐ:

Ուրիշները ճռուան ԿՕՉԻԿ,  
Քո ոտքը միշտ կիսաբորիկ:

Ուրիշները կաքաւ ու լոր,  
Քո կերածը թթու շլլոր:

Ուրիշները յարգինքի չէջ  
Դու օր անցրնւ քրտինքի մէջ.

Թախիկ-թրուխիկ ԿՕՉԿԱԿԱՐ,  
Թարախիկ-թրուխիկ ԿՕՉԿԱԿԱՐ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — ԵՇ, չէք հաւանում հին կարգը, համեցէք, դուք  
այստեղից:

ՄԱՐԴԱՐ — ԵՇ, զու էլ մարդ վախեցրիր, Կարծես էլ ուրիշ տեղ  
չկայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Գնա, տեսնեմ քեզ նման արբեցող բանւորին ով  
տեղ տալու:

ՄԱՐԴԱՐ — Ես միայն այսօր եմ արբել իսկ քո որդիդ ամեն օր՝  
ՅԱՐՈՒԹԻՒՆ — Դուրս այստեղից, ասում եմ: Դուրս ամենքդ էլ:

ՄԱՐԴԱՐ — Ոչինչ. մենք կդնանք: Խակ դու, այսօրվանից փակի՛  
արհեստանոցիդ դուռը: (Փողը ցոյց տալով): ԵՇ, աղերք. տես  
նում էք: Այս օր ամենքդ էլ իմ հիւրերն էք, դէպի «Բարեյու՛  
սոյ հրուանդան» հիւրանոց: Նախ մի մի բիլիարդ, — չախկ՝  
չուխիկ: Յետոյ մի մի շիշ գարեջուր՝ — վարպետ Յարութիւնի  
կենացը, որ մեզ փառաւոր դուրս զցեց: Հա հա հա... (Գնաց  
յետ):

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Այս, աւելի շուտով կկապեմ, քաղցած կմնամ  
Բայց ձեր նմանների օգնութեամբ զործ շարունակել, մի կտո՞  
հաց աշխատել, էլ չեմ ուզիր: Դէ, սիրելիներ. աղօթեցէք

գնացէք: Աղօթեցէք, գուցէ Աստուած ձեզ մի փոքր ամօթ և  
խիղճ պարզեիր: Զէք ուղում աղօթել: Ուրեմն զուք Աստծուն  
էլ էք ուրանում: Հիմայ ձեղնից ամեն բան կարելի է սպա-  
սել: Դէ, գնացէք: Սա կինի վերջին երեկոն: Կպոկեմ դռնե-  
րի վրայից մակագիները և կշպռտեմ ներս: Գնացէք, ես ձեր  
առաջը չեմ կտրի: Մի չնչին չնորհակալութիւն էլ մի ասէք  
ինձ: Զէ չէ, որդիք: Ոչնչ պէտք չէ: Մի ամաչէք, սիրելիներ:  
Ան ես երեսս շրջում եմ մի կողմ և չեմ ուղում ձեզ ամա-  
չացնել: (Շրջուեց): Դէ, Աստուած ձեզ հետ: Գնացէք:

ԱՐՄԵՆԱԿ — Սա մեր պայմանները: (Դրեց սեղանի վրա): Առայ-  
ժմ մենք յայտարարում ենք գործադուլ: (Ամենքը գողնոցները  
հանելով և թեների տակ առնելով, գնացին խանութի դռնով):  
ՅԱՐՈՒԹԻՒՆ — (Յնցվելով): Ի՞նչ լսեցի: «զործադուլ»: (Աղօ-  
թում է): Տնւր ինձ ոյժ և կարողութիւն, Տէր, որ կարողանամ  
դիմանալ (Սահակ եկաւ խանութի դռնով, մի կապոց ձեռին:  
Պառզա):

3

ՅԱՐՈՒԹԻՒՆ և ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ — Եյ, քիչ աղօթիր: Ես էլ չատ աղօթեցի, ես էլ շատ ե-  
րեսս գետնին քսեցի. բայց բոլորը ի զուր, Քար է սիրտը, Զի  
օգնում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Քեզ ով է հարցնում: — օգնում է, թէ ոչ:

ՍԱՀԱԿ — Ա՛... տեսնում ես: Եթէ օգնում է, ապա ուր է քո  
համբերութիւնը: Ինչո՞ւ բարկացար ինչո՞ւ ես ինձնից երես  
դարձնում: Սա է քո աղօթքը: Սա է քո քրիստոնէկութիւնը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Որտեղից ես ձեռք բերել այդ համարձակութիւնը:  
Մոռացել ես: Մի ժամանակ ամօթից աչք գետնից չէիր  
բարձրացնում:

ՍԱՀԱԿ — Խակ այդ քեզ դուր էր գալիս: Ուրախանում էիր, որ  
քո առաջ զլուխ էի խոնարհեցնում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ինչո՞ւ ես եկել, ինչ զործ ունիս այստեղ: Եթէ

Կօշիկ կարել տալու ես եկել, սխալուել ես: — Այսօրւանից փառում եմ արհեստանոց:

ՍԱՀԱԿ — Եկել եմ իմանամ, միթէ մինչև հիմայ էլ չի թեթե ցիս սրտիդ ցաւը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Եթէ սրա համար ես եկել, աւելրսդ նեղութիւն ես քաշել: Արովհետեւ ես իմ ցաւի ճարը կգտնեմ: Յոյժ Աստուած, որ կգտնեմ:

ՍԱՀԱԿ — Ինչ է, չլինի ուզում ես ինձ փախցնես:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Այս տէր Աստուած, ինչ զարմանալի բան կլինէ՞ Զէ, Աստուած վկայ, երենի վարպետ մարդիկ էք, եթէ դուսացել ես քո պատուելի կնոջ և յետ եկած աղջկայ արար մունքը, ապա ես քեզ կյիշեցնեմ: Ասա, խնդրեմ, լաւացան նրա ատամը, որ թուշը կապած սռաջս ելաւ:

ՍԱՀԱԿ — Երբէք նա ատամացաւ չի ունեցել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Եւ ոչ էլ ի հարկէ, — կողքն է ցաւել... որ այդպի ծռուել էր:

ՍԱՀԱԿ — Կեանքում հիւանդացած չկայ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Զարմանալի է, ուրեմն, որ այսքան ուշանում Աստծոյ արդարադատութիւնը:

ՍԱՀԱԿ — Էլ ինչ արդարադատութեան մասին է խօսք, Ահա սկզ քո աշբովի՝ Ես ծնողս անում եմ Յ բուռ հող և իմ ձեռքով ցանութնրա վրա ու թաղում: (Սնում է): Սրանից աւել է ինչ ես պահանջում ինձանից: (Լաց): Խօսում ես Աստծո արդարադատութեան մասին: Բայց ուր է նա: Եւ եթէ չնկայ. ինչն արա տեղ անօրէնութիւնն է թագաւորում: Այս լսիր ձմարիտը: Եթէ իմ տան մէջ չինէր սարսափելի կարի քը, չէր լինի և այն արատը, որ ուր իմ երեսովս ես տալիս բայց սրպէսզի նա չինէր, կաշիցս էի գուքս գալիս: Եւ վերջը այ թէ ինչ եղաւ: Նայի՛ր և հիացիր: (Յոյց է տալի կապոցը):

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ի՞նչ կապոց է:

ՄԱՀԱԿ — Երեար տարիների հաւատարիմ ծառայութեանս վարութիւնը:

Ճատրութիւնը: Այս, այս, թքեցին ձերմակ մաղերիս, չինացին ծերութիւնս, խփեցին ծոծրակիս և պառւած շուն, ում աշքերն ես ուզում կատել. ում առաջ ես ձեանում, որ ովնչ չպիտես, զնա ընտանիքիդ ճամար ցածութիւնդ շարունակիր: Լակցի՛ր այս զարհուրելի խօսքերը: Դէ զնա այժմ արդարադատութիւնից խօսիր: Թի՛ւ, ահա քո արդարադատութիւնը: (Թքեց կոխեց): Արդարադատութիւնը այնտեղ կինէր, (ցած) երբ լուծեին կվառէի և մի գիշերում կրակի կերակուր կշինէի ամրող փայտի պահեստը, որ նրանց անոյն քունը սկ անէի իրանց գլխին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Դու էլ ես խմօրուել այդ նորանոր մտքերով:

ՍԱՀԱԿ — Եւ ինչն չէ, Միթէ ես մարդ չեմ: Միթէ բանականութիւն չունիմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Էթէ ունիս, ինչ հոգս ես անում: Ասում են ձերոնք նոր բնակարան նն վարձել:

ՍԱՀԱԿ — Այս ասում են: Բայց ես այնտեղ ոտք չեմ դրել Ես ցոյց կտամ նրանց, թէ առանց իմ հրամանի ինչ է նշանակումնոր բնակարան վարձելը: Բայց և այնպէս աղջիկս անմեզ է: Մեղքուրը հին կախարդն է: Օ ինչեր եմ տարել նրա պատճառով: Հեշտ է ասել տանելը: Ապա մէկ փորձէին ուրիշներն էլ: Միթէ ընկած մարդուն պիտի ծաղրել...: Ի՞նչ անեմ: Բուր զնամ: Բայցի Աստուածանից չկար մէկը, որ նրա առաջ բանէի այս տանջուած սիրտս: Թեզ մարդ իմացայ, եկայ քո մօտ, իսկ զու էլ ահա թէ ինչպէս ընդունեցիր: Էն... մնաս բարով...

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ես միայն հիմա ճանաչեցի քեզ: Բայց ինչ անեմ: Երբ ուշ է արգեն:

ՍԱՀԱԿ — Այս, ոչ է... Ուրեմն, ներենք իրար:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Աստուած ներէ քեզ եղբայր Սահակ... (Չեռք տուրին), Գնաս բարալ, (Գնացին խանութի դռնով, Յարութիւն տարաւ պայմանները, Մանում է Արամ բակի մուտքով: Օվանէս սկ անենեակի դռնով):

ՕՎԱՆԵՍ և ԱՐԱՄ:

ՕՎԱՆԵՍ — (Բարկացած գանից ներս ատելով). Աշխ, բաւականէ, մայրիկ, արտասուք թափելով աշխարհի հերը չես անիծի: ԱՐԱՄ — Կեցցէս Օվանէս, ու ճշմարիս ես ասում. «աշխարհի հերը արտասուքով չես անիծի»:

ՕՎԱՆԵՍ — Էհ, Արամ, զու դարձեալ: Միթէ ևս հասկանում եմ թէ ինչ եմ խօսում:

ԱՐԱՄ — Հմ, իսկ ես կարծեցի, որ զու արդէն ըմբռնել ես ժամանակի ողին և լաւ մտածել թէ ինչ ես ասում:

ՕՎԱՆԵՍ — Ինչ ժամանակի ոդու մասին է խօսք:

ԱՐԱՄ — Այսինքն, — հեռու լալիանութիւնը, հեռու զիմիկոր ընկճվելը: Թողի կորչի ստրուկներին յատուկ խոնարհութիւնը, Կեցցէ պայքարը: Պէտք է այն, ինչ որ վաղուց է քեզ պակտում: Պէտք է կամքի ոյժ, պէտք է վճռականութիւն և համարձակութիւն, որ վերջապէս թափ տաս քեզնից այդ կօշմարը: Իսկ յետոյ, — որ զիմաւորն է, Օվանէս, — հաստատուն հաւատ: Հաւատ որ մենք պէտք է յաղթենք վերջապէտ հաւատ՝ ու այսքան զոհաբերութիւններից յետոյ, պէտք է աջողութեամբ պսակուի մեր գործը:

ՕՎԱՆԵՍ — Երանի քեզ Արամ, որ այդ բաներով ես ոգեսրվում Երանի քեզ որ սրտիդ վրա ոչ մի ցաւ չունես: Բայց արի զու իմ սրտին էլ նայիր: Արի հարցո՞ւ, թէ ինչ է ասում նա:

ԱՐԱՄ — Այս սիրելիս, տառապել եմ և ես այդ ցաւով: Անծանօթ չենա իմ սրտին: Բայց բաւական է, ինչքան քուն եղանք: Պէտք է զարթնել: Պէտք է աշխատել մոռացութեան տալ այդ, Հեռու քշիր քեզնից փարսողութիւնը: Գիտեմ, երբ երիտասարդ մէջ խօսում է զգացմանքը, բանականութիւնը անդօր է և խելքը լուռ: Աշկայն մի բառէ հեռու քշիր զգացմունքը և մէջտեղ բեր առողջ բանականութիւնը: Գիրի մի դարձնիր նրան զգացմանութեան:

ՕՎԱՆԵՍ — Այսէ զու էլ իմ զրութեան մէջ լինէիր, այդպիսի մաքեր չէին ծագի զլնիդ մէջ:

ԱՐԱՄ — Եղել եմ և հիմա էլ կամ այդ զրութեան մէջ:

ՕՎԱՆԵՍ — Թոյլ է ուրեմն քո սէրը, խախուտ և անհիմն է ուրեմն նա: Յնորք և խարուսատ է, որ զու սիրահարուած ես եղել ինձ պէտ Միթէ, մենք մինոյն սկսուից և մսից չենք, միթէ մինոյն զգացումները չեն մեր մէջ: Սովորգրու, ասա, իրկիր ինձ, Այդ ինչու եմ ես այսպէս տանջվում, իսկ զու՝ ոչ:

ԱՐԱՄ — Ես... ոչ: Երեխ ուրեմն տարբեր են մտածելակերպերը: Ես մտածում եմ, — զիտակցող մարդը իր ամբողջ էութիւնը գերի չպիտի զարձնի ինչոր հիւանդոս զգացմունքների: Նա ունի զաղափար, նա ունի կոչումն: Նա ամենինչ մոռացութեան տալով: պէտք է ապրի նրանց համար, պէտք է աքնի, մեռնի նրանց համար:

ՕՎԱՆԵՍ — Թողի ինձ, Արամ, եթէ զու եկել ես ինձ միսիթարելու շատ չորհակալ եմ: Բայց, թողի ինձ: Միրտս նման է լցրած ուումքի: Նա ամեն բոլէ պատրաստ է, մի փոքրիկ շարժումից պայթել: Ես հաղիւ եմ կարողանում ինձ զսպել: Վիրաւոր գայլի նման կատաղած, ես պատրաստ եմ առաջին պատահողիս վրան յարձակվելու: Երեխ շուտով ես մարդ կսպանեմ... կամ... ոչ, աւելի շուտ ես կսպանեմ ինքու ինձ:

ԱՐԱՄ — Լսիր, Օվանէս! Ասում ես, կսպանես զու քեզ, Այդ ոչինչ: Այդ ես հասկանում եմ: Կապանեմ և ես ինձ... բայց միայն թէ մի մեծ, մի սուրբ զործի համար: Մահը, այս տեսակ մահը, վաղուց եմ աչքիս տակը առել: Ինչ վերաբերում է քո միւս մաքին, որ կսպանեմ մի ուրիշն, թող այդ: Ես զիտեմ քո խօսքը ում մասին է, ինչ օգուտ մարդկութեան, այդ անմիտ սպանութիւններից: — Հմ, քաղցածը քաղցածի արիւնն է թափում, ստրուկի ստրուկի արիւնը ծծում, ուսկուը կոծում: Եւ ինչու համար է այս կոխը, եթէ ոչ մի կտոր հացի համար: Ահա բոլոր զաղանիքը, Ահա քո արագեղիայի բոլոր զաղտնիքը: Իսկ զու մի անմեղ արարածի արիւնը թափելու մասին ես մտածում:

ՕՎԱՆԵՍ և ԱՐԱՄ.

ՕՎԱՆԵՍ — (Բարկացած դռնից ներս ասելով): Առաջ, բաւական է, մայրիկ, արտասուք թափելով աշխարհի հերը չես անիծի:

ԱՐԱՄ — Կեցցէս Օվանէս, ու ճշմարիս եռ ասում. «աշխարհի հերը արտասուքով չես անիծի»:

ՕՎԱՆԵՍ — Է՞ս, Արամ, դու դարձեալ: Միթէ ես հասկանում եմ թէ ինչ եմ խօսում:

ԱՐԱՄ — Հմ, իսկ ես կարծեցի, որ դու արդէն ըմբանել ես ժամանակի ողին և լաւ մտածել թէ ինչ ես ասում:

ՕՎԱՆԵՍ — Ինչ ժամանակի ոդու մասին է խօսքդ:

ԱՐԱՄ — Այսինքն, — հեռու լալիկանութիւնը, հեռու գլխիկով ընկճվելը: Թողի կորչի ստրուկներին յատուկ իսոնարհութիւնը, կեցցէ պայքարը: Պէտք է այն, ինչ որ վաղուց է քեզ պակսում: Պէտք է կամքի ոյժ, պէտք է վճռականութիւն և համարձակութիւն, որ վերջապէս թափ տաս քեզնից այդ կօշմաբը: Իսկ յետոյ, — որ գլխաւորն է, Օվանէս, — հաստատուն հաւատու շաւատ՝ որ մենք պէտք է յաղթենք վերջապէս: Հաւատու ու այսքան զոհաբերութիւններից յետոյ, պէտք է աշողութեամբ պսակուի մեր գործը:

ՕՎԱՆԵՍ — Երանի քեզ Արամ, որ այդ բաներով ես սգեսրվում: Երանի քեզ որ սրտիզ վրա ոչ մի ցաւ չունես: Բայց արի դու իմ սրտին էլ նայիր: Արի հարցրու, թէ ինչ է ասում նա:

ԱՐԱՄ — Այս սիրելիս, տառապել եմ և ես այդ ցաւով: Անձանօթ չէ նա իմ սրտին: Բայց բաւական է, ինչքան քուն եղանք: Պէտք է զարթնել: Պէտք է աշխատել մոռացութեան տալ այդ: Հեռու քշիր քեզնից փարոսութիւնը: Գիտեմ, երբ երփառարդի մէջ խօսում է զգացմունքը, բանականութիւնը անզօր է և խելքը լուռ: Ատկայն մի րոսկէ հեռու քշիր զգացմունքը և մէջտեղ բեր առողջ բանականութիւնդ: Գիտի մի դարձնիր նրան զգայնութեան:

ՕՎԱՆԵՍ — Եթէ դու էլ իմ զրութեան մէջ մնէիր, այդպիսի մտքեր չեին ծագի զլիիդ մէջ:

ԱՐԱՄ — Եղիլ եմ և հիմա էլ կամ այդ զրութեան մէջ:

ՕՎԱՆԵՍ — Թոյլ է ուրեմն քո սէրը, խախուտ և անհիմն է ուրեմն նա: Ցնորք և խարուսա է, որ դու սիրահարուած ես եղել ինձ պէտ Միթէ մնաք միենոյն սակոսից և մասից չենք. Միթէ միենոյն զգացումները չեն մեր մէջ: Սովորցրու, ասա, իրկիր ինձ: Այդ ինչու եմ ես այսպէս տանջվում, իսկ դու՝ ոչ,

ԱՐԱՄ — Ես... ոչ: Երեխ ուրեմն տարբեր են մտածելակերպերը: Ես մտածում եմ, — գիտակցող մարդը իր ամրող էութիւնը գերի չափանի դարձնի ինչոր հիւանդու զգացմունքների: Նա ունի զաղափար. նա ունի կոչումն: Կա ամենինչ մոռացութեան ալպով: պէտք է ապրի նրանց համար. պէտք է ապնի, մնոնի նրանց համար:

ՕՎԱՆԵՍ — Թողի ինձ, Արամ: Եթէ դու եկել ես ինձ միխթարելու շատ չնորհակալ եմ: Բայց, թողի ինձ: Միրտս նման է լցրած ուումբի: Նա ամեն րոպէ պատրաստ է, մի փոքրիկ շարժումից պայցթել: Ես հազիւ եմ կարողանում ինձ զսպել: Վիրաւոր գայլի նման կատաղած, ես պատրաստ եմ առաջին պատահողիս վրան յարձակվելու: Երեխ շուտով ես մարդ կսպանեմ... կամ... ոչ, աւելի շուտ ես կսպանեմ ինքս ինձ:

ԱՐԱՄ — Լսիր, Օվանէս: Ասում ես, կսպանես դու քեզ, Այդ ոչինչ: Այդ ես հասկանում եմ: Կսպանեմ և ես ինձ... բայց միայն թէ մի մեծ, մի սուրբ գործի համար: Մահը, այս տեսակ մանը, վաղուց եմ աշքիս տակը առել: Ինչ վերաբերում է քո միւս մտքին, որ կսպանես մի ուրիշին, թող այդ: Ես գիտեմ քո խօսքը ում մասին է: Ինչ օգուտ մարդկութեան, այդ անմիտ սպանութիւններից: — Հմ, քաղցածը քաղցածի արիւնն է թափում, ստրուկը ստրուկի արիւնը ծծում, ոսկուը կոծում: Եւ ինչու համար է այս կոխը, եթէ ոչ մի կտոր հացի համար: Ահա բոլոր զաղանիքը, Ահա քո արագեղիքայի բոլոր զաղանիքը: Իսկ դու մի անմեղ արարածի արիւնը թափելու մասին ես մտածում:

ՕվԱՆԵՍ — Բայց միթէ ես իրաւունք չունիմ պատժելու նրան,  
որին դու անմեղ ես կոչում:

ԱՐԱՄ — Ոչ, սա պատիժ չէ, այլ ոճիր:

ՕՎԱՆԵՍ — Հմ, մինչև անգամ ոճիր:

ԱՐԱՄ — Այս, ոճիր, և այն ամենամեծ ոճիր: Կարողանալու էիր  
արդեօք պահել նրան այնպէս, ինչպէս նրա սիրտը կցանկար:

ՕՎԱՆԵՍ — Ապա մեր այս ուժեղ ձեռքբերք:

ԱՐԱՄ — Բայց ինչպէս է զնահատվում մեր այս «ուժեղ ձեռքե-  
րի» աշխատանքը: Ահա, տեսար, Օվանէս, թէ որտեղ է գաղ-  
տնիքը: Սրա համար էլ ասում եմքեզ: — Քաջ ես, ել ոտքի.  
մեր առաջ բաց է կռւի մի այլ ասպարէզ, որ մեզպէտներին  
է սպասում: Ահա թէ որտեղ կմոռանաս քո անձնական վիշ-  
տը: Ժամանակը չէ, որ բժշկում է մարզուն իր ցաւերից, այլ  
տարբեր գաղափարները: Միթէ դու աչքերդ կապած ես ման  
գալիս: Միթէ չես նկատում, թէ շուրջդ ինչեր են կատար-  
վում: Բանը մարմնացել է և համակել ամրող աշխարհը:

Քնահարք Արենելը անդամ դարթման մէջ է: Հազարաւոր մեզ-  
պէսիների հարցը վճռած կլինենք ինքներս, երբ մենք յաղ-  
թող կհանդիսանանք: Ինչ զանազանութիւն կայ քեզ նման մի  
գործակատարի, և ինձ նման գործարանական մի բանուրի մէջ: Մինչև  
Մինչև երբ մեր աշխատանքի արդար վաստակը, պիտի լցնի  
մեզ կեղեքողների քսակը: Ահա, առ, իրադա, (տալիս է մի  
բրօշւը): «Պիօլետարներ բալոր աշխարհի միացէք»: Ինչո՞ւ ար-  
ձագանք չտանք այդ կրչին: Ինչու ձեռք ձեռքի չտանք ու  
բաց ճակատով կռվի զաշտ նետուենք: Ինչու մեր արդար դա-  
տը չպաշտպանենք: Այն ժամանակ, Օվանէս, քո գեղանի Շու-  
շանը և իմ հոգեհատոր Մարգարիտը շքեղութեամբ և նոխու-  
թեամբ չին մոլորիվ: Այն ժամանակ նրանք մեր հոգու և սի-  
րոյ մաքրութիւնը չին զոհաբերի նրանց: Ոչ, Օվանէս: Հա-  
շասասարութիւնը մարդկային գաղափարների այն վեհ և միծա-  
գոյնն է, որին պէտք է զոհ բերել ամեն ինչ, ամեն ինչ՝ այս և  
մեր անձը իսկ:

ՕՎԱՆԵՍ — Լոիր, Արամ, ինչ կամիս, բայց ես այս քաղաքում  
այլես մալ չեմ կարող: Քեսիս ամբողջ ընտանիքով մազ հրա-  
ւիրում է Անդրկասպիան երկիր: Գուցէ ճանապարհորդութիւնը  
և օտար երկիրը մոռանալ տան ինձ... Պէտք է շուտով ճա-  
նապարհվել:

ԱՐԱՄ — Այդ հրաշալի է, զնա եղբայր, ես կտամ քեզ մի քանի  
հրանանգներ և դու կտկւես այնտեղ գործել: Բայց և այնպէս  
չմոռանաս, վաղը մայիսի մէկն է: Վաղը սկսվում է: (Յան-  
կարծ): Ա՛ն, ծերունին գալիս է: Դու գիտես, որ նա ինձ հետ  
չունի: Դէ, ես զնացի:

(Յարութիւն յետ է գալիս պայմանների թուղթը ձեռին):

5

ՕՎԱՆԵՍ. ԱՐԱՄ և ՅԱՐՈՒԹԻՒՆ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Է՞՞ սպասիր. Կարդա, տեսնեմ այստեղ ինչ է  
գրված: «1901 թիւ» ապրիլի 30-ին, Բաքու: Պայմաններ 16  
կէտերից: Արդեօք չափազանց մեծ չեն այդ լակունների պա-  
հանջները: (Մեկնում է թուղթը Արամին):

ԱՐԱՄ — Պայմանները ինձ ծանօթ են: Ներկիր հօրեղբայր, նրանք  
ոչ թէ մեծ չեն, այլ նոյնիսկ շատ չափաւոր են:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ի՞նչ սրիկ այս: (Թղթին խփելով): Բաւական չէ այն  
անդիտաններին մոլորեցրել ես, չիմա էլ որան ես ուզում  
խելքից տանել:

ԱՐԱՄ — Հօրեղբայր, խաղղղվիր և ինձ ականջ դիր: Հասկացիր  
վերջապէս, որ սա տնտեսական ահագին մի խնդիր է: Տարե-  
րացին նրա զօրութիւն առաջ, չպիտի դիմանայ ոչինչ: Ճշմա-  
րիտը այն է, որ մեզ նմանների չնորհիր քեզպէտների այս ողոր-  
մելի—մանր: մունր ալիքնատանցները պիտի կործանվեն,

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Կործանվեն: Լսում ես թէ ինչ սառնարիւն եղա-  
նակով է խօսում նա: Ինչո՞ւ պիտի կործանվեն: Հասկացրու-  
ինձ:

ԱՐԱՄ — Բայց թող իմ բացատրութիւնը անհանգիստ չանի քեզ:

Կենարոնացըն բանականութիւնդ և թափանցիր ասածիս:— Այս, նրանք պիտի կործանվեն, բայց այդ կործանվածների փշրանքներից կկանգնեն հսկայական մեծութեան գործարաններ: Սշխատանքի այդ պատճառների մէջ մենք այլես չենք տառապի այսպէս, ինչպէս քեզ նմանները իրանց ամբողջ կեանքի ընթացքում: Սյնտեղ կլինի տնտեսապէս ապահովված ցանկալի եղբայրութիւնը: Սյնտեղ չի լինի տէր ու ծառայ, չի լինի մեծաւոր ու փոքրաւոր: Սյնտեղ կթագաւորի հաւասարութիւն և ազատութիւնը: Խմ սիրտը քեզ համար ցաւում է, հաղար ափսոս, որ այս պարզ ձշմարտութիւնը խորթ է քո հասակին քո հասկացողութեան: Բայց ի՞նչ անել այդպէս պէտք է լինի: Այդպէս կլինի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Էսում ես նրա բարբաջանքը, նա ասում է իմ արհեստանոցը պէտք է կարծանիի: միենայն ժամանակ ասում է, սիրտը ցաւում է ինձ համար: Ասում է մտածում է ինձ համար:

ԱՐԱՄ — ես մտածում եմ որդիների ապագայի, նրանց երջանկութեան մասին, ուրեմն թող հայրերը, — եթէ խելք ունեն, — չորս հակալ լինեն մեղնից:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ես քեզ ցոյց կտամ թէ ինչպէս է լինում չնորհակալութիւնը: (Ուզում է յարձակի Արամի վրա):

ՕՎԱՆՔ — կաց, մի խանգարի նրան: (Արգելում է հօրը):

ԱՐԱՄ — Վազր առաւոտեան ժամը 10 ին: Քաղաքի չորս կէտերից: Հսկայական ցոյց կարմիր զրոշակներով: Պատրաստ եղիր, Օվանէս: Կափելը յայտաբարված է: Մահ, կամ յաղթութիւն: (Գնաց յետ):

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Սպասիր, շան ծնունդ: Ինչու չթողիր մէկ ապահեմ նրան:

ՕՎԱՆՔ — Ի՞նչ ես ձայնդ զլիսիդ քցում: Ի՞նչես ամեն քայլափում հետեւում նրան: Ի՞նչո՞ւ դառն է թվում քեզ նրա առած ձշմարտութիւնը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Ի՞նչ, և զու իմ որդիս, զու ես հաւանութիւն ես տայիս նրա ասածին:

ՕՎԱՆՔ — Այս, ես միանում եմ նրան: Բաւական է: Ես չեմ ուղղում քեզ լսել: Մի ապէի, մի զարմանա: Չեմ ուղղում ոչ լսել և ոչ խօսել: (Գլխիկոր նստեց):

ՅԱՐՈՒԹԻՒՆ — Եւ ոչ իսկ խօսել: Վնաս չունի, որդի: Մի բարկանա: Ես այլես քեզ զլիսացաւանք չեմ տայ: (Պատռելով թուղթը): Թող սրա հետ կործանվի իմ արհեստանոցն էլ, իմ գործն էլ իմ տունն էլ: Սա կլինի վերջին երեկոն: Վազր կը հաւաքեմ եղած չեղածս, կտանեմ կիրակնօրեայ շուկա, կծախծիսուեմ ամեն ինչ: Յետոյ երբ ամեն բան կուտենք, կիբրջացնենք, կրանեմ մօրդ ձեռքից, գանէ զուրս կընդնեմ, ողորմութիւն կհաւաքեմ: Այդ էիր ուղում, որդի: Դէ, զնա միացիր նրան: Սա կլինի վերջին իմ խօսքը քեզ հետ: Գնա միացիր նրան: Տայ, Սատուած որ արդարութիւնը ձեր կողմը լինիք: Ես ընդզէմ արդարութեան ոչինչ չունիմ: Ոչինչ... ոչինչ... (Գնաց յետ):

(Բակի կողմի մուտքից եկաւ Գասպարը):

## 6

### ՕՎԱՆՔ և ԳԱՍՊԱՐ.

ԳԱՍՊԱՐ — Բարի երեկոյ, Օվանէս:

ՕՎԱՆՔ — (Ուշքի է զալիս, պոնզում, յետոյ զսպում իրեն): Գասպար, Ինչո՞ւ ես եկել:

ԳԱՍՊԱՐ — Հենց այնպէս: Սիրտս ուզեց և ես եկայ քեզ տեսնեմ:

ՕՎԱՆՔ — Դու համարձակվում ես կատակ անել: Զգիտես ինչ կարող է պատահել:

ԳԱՍՊԱՐ — Գիտեմ: Կարող է պատահել, որ դանակը կդնեն այս տեղիս և խրես ներս: (Ցոյց տուեց վորը):

ՕՎԱՆՔ — Եւ զու կասես սա կլինի անարդարութիւն:

ԳԱՍՊԱՐ — Ոչ: Սա կլինի բարկութեան թափի մէջ սպանութիւն գործել և յետոյ իսկոյն զջաւ՝ անմեղ արիւն թափելու հա-

մար: Լսիր, Օվանէս: Ի՞նչ հարկաւոր է տաքանալ: Խօսենք սառն և հանդիսաւ կերպով: Իսկ երբ կդայ տաքանալու րոպէն մի վախի, ես ինքս քեզ խմաց կտամ:

Օվանէս — Ել ինչ պիտի ասես: Էլ ասելու տեղ թողել ես որ:

ԴԱՍՊԱՐ — Լսիր ինձ, աղաչում եմ: Ես չեմ երկարացնի: Հաւատամ, իմ սիրտս էլ է լցված... և... գուցէ քոնից ոչ պակաս: Վերջին ժամանակները... կամ աւելի լաւ է տաել — այն օրից յետոյ զու իզուր ես ինձնից երես դարձրել: Թող ես լինեմ սրիկայ և անպիտանի մէկը, բայց խոստովանիր, որ վատ ընկեր չեմ եղել:

Օվանէս — Օ, ինչ խօսք, Տեղը եկաւ և ես իմ այս կուրացած աչքով տեսայ քո աղնուութիւնը և հիացայ:

ԴԱՍՊԱՐ — Աչ, զու իմ աղնուութիւնը չտեսար, բայց հիմա, տեսնում եմ ժամանակը եկել է, որ իմանաս ինչ է կատարվում այստեղ: (Սրտում):

Օվանէս — Անշուշտ զզջումն, ուրիշ ինչ կարող է լինել: Երեկ կամնցար պատառս խէել ձեռքիցս: Ոչինչ: Գնա, բարի վայելումն:

ԴԱՍՊԱՐ — Մի յանդիմանիր չգործածիս համար: Պահապան հրեշտակի նման միշտ կանգնած եմ եղել նրա դռան:

Օվանէս — (Սաստիկ հետաքրքրված): Ո՞ւմ:

ԴԱՍՊԱՐ — Քո նշանածի... գեղեցիկ Շուշանիկի: Օվանէս, յիշում ես իմ խօսքերը, երբ հիւանդատեղից զու ինձ խնամեցիր մօր պէս և ոտքի կանգնեցրիր:

Օվանէս — Սովորական խօսքեր,—զու ասացիր, քոս ազատած կեանքը քեզ է պատկանում, հրամայիր ինչ կուզես և ես պարաստ եմ:

ԴԱՍՊԱՐ — Եւ ահա ես եկել եմ և ասում եմ,—ես պատրաստ եմ:

Օվանէս — Ես ոչինչ չեմ հասկանում:

ԴԱՍՊԱՐ — Յիշում ես, Օվանէս, ձեռներս ինչպէս էր քոր գալիս, երբ մի ընտանիքում բացարձակ անառակութիւն էինք նկատում: Ա՛հ, ես նրանց հերն եմ անիծել:

Օվանէս Դու հաստատում ես, որ նրանք բանը՝ այդտեղն են հասցրել:

ԴԱՍՊԱՐ — Աչ, երեխայ, ապա ինչու ճամփա դրին. և ինչպէս ճամփա դրին: Միթէ իրեկ զու չհասկացար նրա մօր վարմունքը:

Օվանէս — Խոստովանիր, Գասովար, որ զու էլ մօրս պէս, ինձ միթարելու համար ես ամբաստանում նրանց:

ԴԱՍՊԱՐ — Երգւում եմ արեսովդ, այդպէս բան չկայ:

Օվանէս — Դու ամենքի առաջ ասացիր, որ ես սիրուհի եմ պահում:

ԴԱՍՊԱՐ — Այդ մի պատրուակ էր, որ նրանց բացարձակ մերժումից սիրտ չկոտրիլ: Բայց հարցը մայր ու աղջիկ վաղուց էին վճռել: Դու այդ փոքրիկ իմ մեղքը պէտք է ներես: (Բարձր և զգացվոծ) Օվանէս...

Օվանէս — Ի՞նչէ:

(Պառուղա.

ԴԱՍՊԱՐ — Թեզնից առաջ Շուշանիկին ես եմ սիրել:

Օվանէս — Դու... զու... Ուրեմն ինչու ինձ չնախազգուշացրիր:

ԴԱՍՊԱՐ — Զգիտեմ: Երբ մէջտեղ ընկաւ քո անունը, եռ լուցիր:

Օվանէս — Ինչու լուցիր, ինչու իմ աչքս չբացեցիր:

ԴԱՍՊԱՐ — Որովհետեւ ուրախացայ անկեզծ սրտով: Որովհետեւ կարծեցի հրաշալի կերպով կատարվեց հատուցումը իմ երախտագիտութեան: Ես անհամբեր սպասում էի ան օրին, երբ պիտի տեսնէի քո երջանկութիւնը: Ես կարծում էի միանդամից ձեռք եմ բերել մի եղբայր... և..., այս, և մի քոյր: Թե չունէի թռչելու: Ես ամենօր շտապեցնում էի մօրը, որ օր առաջ տեսնեմ քո ուրախութիւնը:

Օվանէս — Ինչու էիր շտապեցնում:

ԴԱՍՊԱՐ — Վտանգաւոր որսորդներով էր շրջապատված թռչունդ. Վախենում էի, — չինի թէ որսդ փախցնեմ ձեռքիցդ:

Օվանէս — Յեանց:

ԴԱՍՊԱՐ — Մի անգամ, օ ոչ, հենց նոյն զիշերը ես բռնեցի... այս

բանեցի գողին գողացածը ձեռին, գողութեան տեղում:  
**ՕՎԱՆԵՍ** — Ա՛հ, մի ասի... մի ստի... ևս այդ բանին հեշտութեամբ  
 չեմ կարող հաւատալ:  
**ԳԱՍՊԱՐ** — Հրամայում ես ուրեմն պատռեմ սիրաս. (Երկու ձեռ-  
 քով բռնում է կուրծքը):  
**ՕՎԱՆԵՍ** — Ինչպէս տեսար:  
**ԳԱՍՊԱՐ** — Մի սենեակում, այն ֆրանտի հետ:  
**ՕՎԱՆԵՍ** — Նրան, առաւմ ես:  
**ԳԱՍՊԱՐ** — Ապա էլ ում:  
**ՕՎԱՆԵՍ** — Իսկ որտեղ էր մայրը:  
**ԳԱՍՊԱՐ** — Դժողքի յատակում. Տանից կօրել էր. նա յետք եկաւ  
**ՕՎԱՆԵՍ** — Եւ ինչ:  
**ԳԱՍՊԱՐ** — Ել ինչ, արիւնը տուաւ զլխիս. և ես հնարեցի այն,  
 ինչ որ մայրը քեզ աւաց:  
**ՕՎԱՆԵՍ** — Բաւական է... ես այլիս ոյժ չունեմ քեզ լսելու:  
**ԳԱՍՊԱՐ** — Ոչ, զու պէտք է լսես. Ես եկել եմ քեզ նրանց մօտ  
 հիւր տանեմ. Ես արդէն նրանց նախապատրաստել եմ:  
**ՕՎԱՆԵՍ** — Որ գամ ու շարունակութիւնը իմ աչքով տեսնեմ. Չու  
 չես խղճում ինձ:  
**ԳԱՍՊԱՐ** — Հասկացիր միտքս. Կնիկ մի լինի:  
**ՕՎԱՆԵՍ** — Ել ինչ միտք... (Յանկարծ հասկանալով). Ա՛, ուրեմն  
 ահա թէ ինչու ես եկել:  
**ԳԱՍՊԱՐ** — Եթէ իմանայի, որ կհամբուրէիր իմ ձակատը, ես ամեն  
 ինչ վազուց իմ ձեռքով արած վերջացրած կլինէի:  
**ՕՎԱՆԵՍ** Ինչու չարիր:  
**ԳԱՍՊԱՐ** — Եթէ այդպէս է, որ թոյլ ես տալիս, ուրեմն վճ-  
 ռուած է:  
**ՕՎԱՆԵՍ** — Աչ, սպասի՛ր:  
**ԳԱՍՊԱՐ** — Համեցէ՛ք:  
**ՕՎԱՆԵՍ** — Բայց ես չեմ կամենում անարդար լինել. ուրեմն նախ  
 դատաստան, յետոյ վճիռ:  
**ԳԱՍՊԱՐ** — Հաս լաւ. դու կլինես դատաւոր. իսկ ես վկայ:

**ՕՎԱՆԵՍ** — Բայց միթէ արդարութիւն կլինի, թողնել մօրը և  
 սպանել նրան:  
**ԳԱՍՊԱՐ** — Մայրը պէտք է ապրի:  
**ՕՎԱՆԵՍ** — Ապրի նա, որ հարազատ դաւակի կորստեան պատճառ  
 է եղել:  
**ԳԱՍՊԱՐ** — Այո, պէտք է ապրի, և յաւիտեան տանջպի:  
**ՕՎԱՆԵՍ** — Ճիշտ է. որանից մեծ պատիժ չի կարելի հնարել նրա  
 համար. իսկ այն պարոնը, որին ֆրանտ ես կոչում:  
**ԳԱՍՊԱՐ** — Ա՛հ, մի հարցնի. Վերին աստիճանի ավնիւ տղայ է:  
 Բացի այդ, նրանում ոչ մի մեղք չկայ. Թէ չէ Գասպարի  
 գանակը վազու, պառկացրած կլինէր նրան:  
**ՕՎԱՆԵՍ** — Այդ ճշմարիտ է:  
**ԳԱՍՊԱՐ** — Ուրեմն դու կդաս:  
**ՕՎԱՆԵՍ** — Այու,  
**ԳԱՍՊԱՐ** — Խանութիս դուռը կիսաբաց, ճըադս հանդցրած  
 քեզ կսպասեմ:  
**ՕՎԱՆԵՍ** — Զմոռանաս. — Նախ դատաստան, յետոյ վճիռ:  
**ԳԱՍՊԱՐ** — Ի՞ն, ցը...  
**ՕՎԱՆԵՍ** — Սպասի՛ր, մհնք դեռ չհաշտվեցինք... Փասպար:  
**ԳԱՍՊԱՐ** — Օվանէս...  
  
 Բանեցին իրար ձեռքը, պատկեր:  
  
 Վերջ երկրորդ արարի:  
  
 Վարագոյր:

նով): Շուշան, այստեղ եկ: (Շուշան մանում է չքեղ հազված ձեռին թղթի փողեր, բերնին ծխախոտ):

2

ԳԱՅԻԱՆԵ, ՍԱՀԱԿ և ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ — Ի՞նչ կայ:

ԳԱՅԻԱՆԵ — Հաշիւ է պահանջում:

ՇՈՒՇԱՆ — (Ծածուկ մօրք փող է տալիս): Ստացի՛ր կարտիդ փողը, Համբի՛ր: (Հօրը): Հը, ինչպէս ես հայրիկ, անկողինդ փափռէկ է:

ՍԱՀԱԿ — Ես ինձ փշերի վրա էլ հանգիստ կզգամ. միայն թէ սիրոս հանգիստ լինի: (Յանկարծ): Այդ ի՞նչ է. դու պապիրոս ես քաշում:

ՇՈՒՇԱՆ — Ա՛... (Քցում է ոտքի տակ):

ԳԱՅԻԱՆԵ — (Որ փող էր համրում): Ութ, 11, 12. (Աղջկայ սխալ ուղղելով): Բժիշկն է հրամայել: Ատամը ցաւում է:

ՍԱՀԱԿ — Ճիշտ է ասում:

ՇՈՒՇԱՆ — Այս, իհարկէ. իսկ դու չես հաւատում:

ՍԱՀԱԿ — Գնալու տեղ ունես, այլպէս զուգվել ես:

ՇՈՒՇԱՆ — Իհարկէ չէ:

ԳԱՅԻԱՆԵ — Տասնուհինգ, 16.. Այս կէս գիշերին որտեղ պիտի գնար:

ՍԱՀԱԿ — Երեկ խոստացաք ինձ հաշիւ տաք:

ՇՈՒՇԱՆ — Լաւ վաղ առաւօտ քեզ հաշիւ կտանք:

ԳԱՅԻԱՆԵ — Հիմա քնելու ժամանակ է (օրոշում է) օօ..

ՍԱՀԱԿ — Ես քեզ չեմ հարցնում:

ԳԱՅԻԱՆԵ — (Շուշանին ծածուկ): Խմացրու նրան:

ՇՈՒՇԱՆ — Այս, մի քիչ խմիր, իսկ յետոյ էլ հաշիւ կտանք:

ՍԱՀԱԿ — Իսկ դու ինչո՞ւ չես խմում:

ՇՈՒՇԱՆ — Թո կենացը: (Խմեց):

ՀԱԿ — Եւ դու իսկ որ խմեցիր: Դու աղջիկարմատ չամաչեցիր

## Ա Ր Ա Ր Ե Ր Բ Ո Ր Դ

Ընդարձակ սենեակ: Մէջտեղի պատում 2 դուռ, որոնց աշակողմինը մուտքի, ձախակողմինը ննջարանի, որ բացվելուս երեսում է վառ, կախած լամպ. մահակալ և այլն: Աջ պատի վրա 2 դուռ, առաջինը տանում է խաղասենեակ, երկրորդը Սահակի սենեակ: Առանձին շքեղութիւն չկայ, բայց առաջիւ անշրութիւնն էլ բացակայում է: Զախ պատի տակ տախտ, բարձեր և այլն: Մէջտեղ սեղան վրան ուտել-խմելիք: Գիշեր է:

1

ՍԱՀԱԿ և ԳԱՅԻԱՆԵ. (Փոքր ի՞նչ հազված է չքեղ):

ԳԱՅԻԱՆԵ — (Սահակին, որ նստած է սեղանի մօտ, աթոռի ծայրին): Տեսնում ես, եթէ լեզուիդ տէրութիւն անես, միշտ քեզ լաւ կպահենք:

ՍԱՀԱԿ — Դուք այդ պարտաւոր էք անելու: Ես ձեզ քիչ չեմ պահել:

ԳԱՅԻԱՆԵ — Ով է ի՞նչ ասում: Այս երբ լաւանաս, Շուշանիկը քեզ համար նոր շորեր էլ կդնի:

ՍԱՀԱԿ — Ինձ նոր շորեր պէտք չեն: Կանչիր նրան այստեղ:

ԳԱՅԻԱՆԵ — Տէր Աստուած, նրա հետ ի՞նչ դործ ունես: Ռւտել ես ուղում, կեր, խմել ես ուղում խմի՛ր: Էլ ուրիշներին ինչո՞ւ ես խանգարում:

ՍԱՀԱԿ — Կանչի՛ր նրան այստեղ ասում եմ: Երեկ մայր ու աղջիկ խոստացաք ինձ հաշիւ տաք:

ԳԱՅԻԱՆԵ — Լաւ, լաւ: Գլուխս մի՛ տանիլ: (Խաղասենեակի դըու

ՇՈՒՇԱՆ — Բայց չէ որ ինքու հրամայեցիր:

ՍՈՀԱԿ — Հա այդ ճիշտ է:

ԳԱՅԻԱՆԵԼ — Խորամանգութեանը նայեցէք:

ՍՈՀԱԿ — Ասացէք ինձ, այդ չքեզութիւնը որտեղից է: Ուկով լի կարաս էք գտել: Թէ ուզում էք աշխարհ զարմացնէք: Զէ որ տեսնողները կկարծեն ես եմ զողութիւն արել:

ԳԱՅԻԱՆԵԼ — Խոկ մենք: Միթէ մենք մեռել ենք: (Սաղրում է աղջկան):

ՇՈՒՇԱՆ — Մենք ապրում ենք մեր աշխատանքով:

ՍՈՀԱԿ — Սյախնքն մայր ու աղջիկ ձեռքի տուած էք վաստակում:

ԳԱՅԻԱՆԵԼ — Ապա ինչ է, կեղծ փող ենք կտրում:

ՇՈՒՇԱՆ — Ուրախ չես, որ քո բեռը թեթեացնում ենք:

ՍՈՀԱԿ — Թողի իմ բեռը հազար անդամ ծանր լինի, ես կտանեմ Միայն թէ մեր անունի վրա արատ չլինի: Գիտեմ, որ մաքուր աղջիկ ես: Եւ եթէ վրադ հաջողներ կան, պատճառը սա է: Դու իմ սիրելիս նրա խելքով մի ընկնիր: Խոցի Օվանէսի հետ հաշտուել ես, ճիշտ է:

ՇՈՒՇԱՆ — Ճիշտ է, ճիշտ է, հայրիկ:

ՍՈՀԱԿ — Եւ նա գալի՞ս է այստեղ:

ՇՈՒՇԱՆ — Արդէն վաղուց, երեկոները:

ՍՈՀԱԿ — Սյդ լաւ է: Ես քեզ ասում եմ, ոու նրա հետ բախտաւ ոոր կինես: Ես հանգիստ սրտով կօրհնեմ քեզ և հանգիստ խղճով գերեզման կմտնեմ:

ՇՈՒՇԱՆ — Դէ կեր, խմիր:

ՍՈՀԱԿ — Ինձ պէտք չէ այս ճոխութիւնը: Մի կաոր չոր հացն էլ ինձ բաւական է: Տար ինձ իմ սենեակ, պառկեցրու և ծածկիր ինձ: Խոկ առաւատեան հաշիւ կտաք: Դու էլ, Եյ:

ԳԱՅԻԱՆԵԼ — Լաւ լաւ, կտանք, կտանք, Զգուեցրուց էլի:

ՍՈՀԱԿ — Սանձ գիր լեզուիդ... թէ չէ... (Չեռքը բարձրացնում է):

ՇՈՒՇԱՆ — Զէ չէ, հայրիկ. նա քեզ շատ է խղճում: Նա միշտ ինձ խրատում է. միշտ ասում է, հայրիկդ է, պառաւել է,

պէտք է ալսուհետև նրան լաւ պահել:

ՍՈՀԱԿ — Հա հա հա, և դու հաւատում ես, որ նա ճշմարիտ է ասում: Հաւատալ նրան, նոյնն է ինչ, ճշմարիտ Աստուծուն մոռանալ, և սատանային պաշտել: (Կնոջը): Դե, դե, չար սատանա...».

ՇՈՒՇԱՆ — Բաւական է, թէ չէ հարեւանները կլսեն: (Տարաւ հօրը նրա սենեակ):

ԳԱՅԻԱՆԵԼ — Երբ պէտք է ազատուեմ այդ անդամալոյժի ձեռքից տէր..: Սա ծր է, որ ես եմ քաշում:

Յ.

ԳԱՅԻԱՆԵԼ և ԳԱՍՊԱՐ (Մտնում է խաղասենեակից):

ԳԱՍՊԱՐ — Է՛, գրպաններս դատարկեց ֆրանտը: Թղթախաղ հնարազգի էլ հերն եմ անիծել: Բայց ոչ, նա չլինէր, ինչով կապրէիր: Դէ, մատեցիր քո արդար ձեռով մէկ գինի ածա: Հօ գիտես, որ տարվազը վրէժը քեզնից պիտի առնի:

ԳԱՅԻԱՆԵԼ — (Ածեց գինի): Խմիր, կեր, ինչքան քէփդ է:

ԳԱՍՊԱՐ — Սմենից լաւը քո գործն է: Ով տանի—չտանի, զու հոլշտ տարած ես: Խոկ ես խմելու եմ, հարբելու եմ: (Խմեց): Ածա մէկն էլ Նայիր մէջքդ չցաւիս: Ծանր գործ է:

ԳԱՅԻԱՆԵԼ — (Ածեց): Խմում ես, խմիր. գլուխս մի տանիր:

ԳԱՍՊԱՐ — Էլի՞ խոռվեցիր: Ինչո՞ւ քեզ նման կինարմատի մարզը իմ հայրը չի եղել,—Աստուծ ողորմի կողքի մեռելներին:

ԳԱՅԻԱՆԵԼ — Որ գինս իմանար:

ԳԱՍՊԱՐ — Այո, և ամենօր հարբած տուն գալուս մուշտին զմիկ հասացներ:

ԳԱՅԻԱՆԵԼ — Այդ ինչի համար:

ԳԱՍՊԱՐ — Դէ ինարէ բարի գործերիդ համար: Մի խօսքով, կենացդ:

ԳԱՅԻԱՆԵԼ — Հմ, կոկորդումդ մնայ, խեղզուես ու պրծնես:

ԳԱՍՊԱՐ — Դէ լաւ, քեզ նման մադամին ինչ կսազի երիտասարդի

Կատակներից նեղանալ: Դիմում: Եթէ ուսում ունենայի երեսի մարդ կլինէի:

ԳԱՅԻԱՆԵ — Վերջացրու տեսնենք խօսքդ ինչի մասին է:

ԳԱՍՊԱՐ — Հաշտութիւն, գայիշանէ, հաշտութիւն: Հանակ բան ըստ կարծես իմ արածը: Ո՞վ կարող էր Օվանէսին նորից ձեր տուն բերել: Խոկ ես գլուխը խարեցի և բերի:

ԳԱՅԻԱՆԵ — Ինչպէս խարեցիր:

ԳԱՍՊԱՐ — Այնպէս: Համոզեցի, որ մայր ու զջիկ նրա կարօտից մեռնում էք: Հմ: Ես ձեզ էլ խարեցի, որպէս թէ Օվանէսը ձեր բարին է ցանկանում:

ԳԱՅԻԱՆԵ — Խոկ նա չի ցանկանում:

ԳԱՍՊԱՐ — Օ՛ ինչ խօսք: Միայն թէ պէտք է նրան գոնէ մի անգամ մի լաւ խմեցնել: Երբ մարդ խմած է, այն ժամանակ միշտ այն սիրտը կրացի: Այ ես, մի շաժակ խմել եմ և սիրտս բացում եմ, օրինակ երբ դու մնանես, գերեզմանիդ վրա եկեղեցի եմ շինել տալու: (Պարապվում է ուտել խմելով):

ԳԱՅԻԱՆԵ — Հողեմ լակած գլուխող: (Շուշան յետ է գալիս):

#### 4.

#### ԳԱՅԻԱՆԵ, ԳԱՍՊԱՐ և ՇՈՒՇԱՆԻԿ

ՇՈՒՇԱՆ — Պառկեցրի: (Ճած մօրը): Նկատեցիր մայրիկ, նա ցնորդված է երեսում:

ԳԱՅԻԱՆԵ — Տեղն է: Կասկածամիտ մարդու վերջը ցնորամտութիւն կիմնի: Թողլ մի քիչ պակաս կասկածի: Ի՞նչ վատ բան եմ ոսվորեցնում քեզ, որ ամեն օր երեսովս է տալիս: Ասում եմ տղերքօնց հետ սիրով եղիր: Չասեմ: Ապա ինչով ապրենք: Միթէ սրանով վատ մայր դառանք: Այ, մէկն էլ սա, չասեմ հետը քաղաքավարի եղիր:

ՇՈՒՇԱՆ — Օ, այս մէկի հետ բոլորովին ուրիշ լեզուով պէտք է խօսել:

ԳԱՅԻԱՆԵ — Խմեցրու, աշխատիր խօսք քաշել: Զուրը աչքիս պարզ չի երեսում:

ՇՈՒՇԱՆ — Գասպար իվանիչ, ինչու էք փախել:

ԳԱՍՊԱՐ — Անտրակտ եմ անում, զուցէ յետոյ բախտը շուռ գայի կողմէ:

ՇՈՒՇԱՆ — Աստուած տայ:

ԳԱՍՊԱՐ — Հմ, բերաններինդ ինձ, սրաներինդ ձեզ:

ՇՈՒՇԱՆ — Ես այդ սրտանց եմ ցանկանում:

ԳԱՍՊԱՐ — Այ եթէ ես կարողանայի ձեր չափ խելօք լինել, միշտ կտանիի: Դուք փախչում էք երբ տարած էք: Խոկ ես չեմ կարողանում: Դուք այսօր էլ փախաք: Ինչո՞ւ:

ՇՈՒՇԱՆ — Մի ժամանակ զուք էիք ինձ այնտեղից փախցնում:

ԳԱՅԻԱՆԵ — Ես էլ Շուշան, հակառակ եմ խաղալուդ: Ձշմարիտ չեմ ասում Գասպար: — Աղջիկարմատին ինչ կպատկանի տղամարդկանց հետ նստել ու կարտ խաղալ:

ԳԱՍՊԱՐ — Ուկի է բերանդ, ու խօսքերդ մարդարիտ: Բայց աղջիկ իր բանը քեզնից լաւ է հասկացել: Եւ ինչու չի: Քանի որ երիտասարդ է, քանի որ գեղեցիկ է, չպէտք է մտածի սեօրի համար:

ՇՈՒՇԱՆ — Խոկ ինքներդ շատ էք յետ քցել:

ԳԱՍՊԱՐ — Վահ, հս հօ աղջիկ չեմ:

ԳԱՅԻԱՆԵ — Ինչ ես հաջեցնում նրան: Զես հասկանում ինչ յիմարութիւններ է զուրս տալիս:

ՇՈՒՇԱՆ — Սիալվում ես մայրիկ, պարոն<sup>ո</sup> Գասպարը ինձ միշտ նայում է եղբօր աշքով: Այնպէս չի, Գասպար իվանիչ:

ԳԱՍՊԱՐ — Իհարկէ այդպէս է...: Զեղ նման 12 քոյր ունենայի, աւելի լաւ կիխէրի-Եկամուտի ուրիշ աղքիւրի մասին, չի մըտածիլ: Ես ձեր մայրը իմ-կատակը ձշմարտութեան տեղ է ընդունում աւելի լաւէ լրենք: (Շարունակում է ուտել խմելը: (Օվանէս մտնում է մուտքի դռնով):

#### 5

#### ԳԱՅԻԱՆԵ, ՇՈՒՇԱՆ, ԳԱՍՊԱՐ և ՕՎԱՆԵՍ

ՕՎԱՆԵՍ — Բարի երեկոյ ձեզ:

ԳԱՅԻԱՆԵ — Այ Աստծոյ բարին, պարոն Օվանէս: Այդ ինչու էք

այսօր այդպէս ուշացել

ԳԱՍՊԱՐ — Լսել է իրան ծանր պահողի պատիւը մեծ կլինի:

ՇՈՒՇԱՆ — Խնչու էք ծաղրում, երեխ մի պատճառ է եղել:

ԳԱՍՊԱՐ — Պատճառը այն է, որ ուզում է խաղայ, բայց համարձակութիւն չունի:

ԳԱՅԻԱՆԻ — Գուցէ փող չունի:

ԳԱՍՊԱՐ — Լաւ հասկացար:

ԳԱՅԻԱՆԻ — Այն ժամանակ ես կտամ: Առէք, գոնէ մի անդամ էլ փորձեցէք ձեր բախտը:

ՕՎԱՆԻՍ — Ոչ, ոչ, ես արդէն փորձեցի... Այս փորձեցի... բայց շատ անաջող, նրանից յետոյ նոյնիսկ ամաչում եմ այսակ ոտք դնել:

ՇՈՒՇԱՆ — Այն ժամանակ ես ձեղ համար կածեմ մի բաժակ դիւնի, որ ամօթին խսկոյն զուրս կմդի: (Ածում է):

ԳԱՍՊԱՐ — Խնչպէս էլ լաւ զիտէ միջոցը:

ԳԱՅԻԱՆԻ — Ի՞նչ ես ամեն բան զէպի վատը ծռում: Երեխ ուշ զում էր ասել, —զինին համարձակութիւն է տալիս մարդուն:

ԳԱՍՊԱՐ — Մի բարկանայ: Ես նրա մասին ոչ մի վատ բան չեմ մտածում:

ՕՎԱՆԻՍ — (Ընդունելով գինին): Շնորհակալ եմ... բայց ի՞նչ կենաց խմենք...

ԳԱՍՊԱՐ — Խմիր հաշտութեան կենացը: Երեսելի բան է հաշտութիւնը: Երբ մարդ հաշտ է, թէկուզ քարերի վրա լինի պառակած, բայց այնպէս է խոմիացնում, որ կարծես ոչ մի հոգտու ոչ ոչ մի անելիք չունի:

ՕՎԱՆԻՍ — Ոչ, սա մի այնպիսի բողէ է, որ պէտք է խօսի մի միայն լուռթիւնը: Եւ ով ունի աւելի առւր լեզու, քան լուռթիւնը: Զեր կենացը օրիորդ: (Խմեց):

ՇՈՒՇԱՆ — Դէ ասացէք, խնչու էք այսօր ուշացել:

ՕՎԱՆԻՍ — Ես զբաղուած էի մեր տան իրերը կասպոտելով: Այս զիշեր ժամը երեքին մենք շոգնաւով ճանապարհ ենք ընկերում Անդրկասպեան երկիր:

ԳԱՍՊԱՐ — Ուրեմն այս քաղաքում էլ ուրիշ անելիք չունեա:

ՕՎԱՆԻՍ — Ոչ, չայրս ստիպւած եղաւ փակել իր արհեստանոցը: Կամ աւելի լաւ է ասել, —նրան ստիպեցին իր բանւորները Անվերջ գործադուներ, ծանր պայմաններ. խսկ նա հին մարդ է, չկարողացաւ տանել:

ՇՈՒՇԱՆ — Ուրեմն զուք եկել էք մեզ մնաս բարով ասելու:

ՕՎԱՆԻՍ — Ոյս, յաւիտենական մնաս բարով:

ԳԱՍՊԱՐ — Բայց մինչ մնաս բարեաւ ասելդ, չի կարելի պատմես թէ ինչ եղաւ այն գործի դատաստանը:

ՇՈՒՇԱՆ — Դատաստան, ինչ գործի:

ԳԱՍՊԱՐ — Յանցաւորը մի գեղեցիկ կին է, որ անզգուշութեամբ խփել է զանակով իրան սիրողի ուզիղ սրտի մէջանդին: Դատաւորը անփորձ, կամքից զուրկ, և մի թոյլ երիաստարդ է, որ օրերով ուշացնում է զատավճիռ հանել: Այն ինչ, յանցանքը պարզ է և ոչ մի բացատրութեան կարիք չունի:

ՕՎԱՆԻՍ — Ինչու ես մնզադրում դատաւորին: Կարծում ես նա մարդ չէ: Կարծում ես մարդկայն հասարակ զգացմոնքից զուրկ է նաև:

ԳԱՍՊԱՐ — Ի՞նչ ես պաշտպանում դատաւորին: Ես շատ լաւ գիտեմ, որ ամեն անգամ նա յանցաւոր կնոջը խօսեցնելուս, քիչ է մնում նրա առաջ մոմի նման հալվի:

ՇՈՒՇԱՆ — Իսկ վկաներ կան:

ԳԱՍՊԱՐ — Կայ միայն մի վկայ: Բայց այդ յիմարի ուխին նայող չկայ: Եւ աեղն է: Ես լինէի նրա տեղը, լեզուս տակից վկարէի: Ինչ է զուր տեղը զլուխը քարին տալիս:

ԳԱՅԻԱՆԻ — (Ծածուկ Շուշանին): Մրանց ասածի մէջ մի չարմիաք կայ: Աշխատիր մի քիչ խմացնել: Յետոյ հեռացիր ու զգոյ: Կղիր:

ՇՈՒՇԱՆ — (Ծածուկ մօրը): Ոչ մի չար միաք չկայ: Գնա հանգիստ եղիր:

ԳԱՅԻԱՆԻ — Էհ, Օվանէս, զեռ չզնաք: Իսկ ես գնամ ձեղ համար մի լաւ ընթրիք պատրաստեմ: (Գնաց խոհանոց):

ՇՈՒՇԱՆ — Համեցէք մէկն էլ խմէք: (Ածեց):

ՕՎԱՆԵՍ — Շնորհակալ եմ, (Խմեց): Խնդրեմ նեղութիւն մի քաշէք:  
եթէ գործ ունեք, համեցէք... ես դեռ այստեղ եմ:

ՇՈՒՇԱՆ — Նայեցէք, չփախչէք. թէ չէ կնեղանամ և Աստուած  
վկայ շատ կնեղանամ: (Գնաց խաղասենեակ):

6

### ԳԱՍՊԱՐ և ՕՎԱՆԵՍ

ՕՎԱՆԵՍ — (Շուշանի ետեից): Շան ծնունդ, ի՞նչ զօրութիւն կայ  
քո մէջ:

ԳԱՍՊԱՐ — Մի զօրութիւն, որի առաջ տղամարդը կատու է  
կարում:

ՕՎԱՆԵՍ — Ի՞նչ ես ուզում ինձանից: Միթէ քո մէջ խիզճ չկայ:

ԳԱՍՊԱՐ — Կար մի կտոր, նա էլ կօշկիս կարկատան քցել տուի:  
(Ցոյց է տալիս առձանակը): Նայիր, տես ի՞նչ է տում սա  
իր կլորիկ բերանով:

ՕՎԱՆԵՍ — Չգիտեմ և չեմ ուզում գիտնալ:

ԳԱՍՊԱՐ — «Ես քեզնից պահանջում եմ ուսնակոխ եղած իմ պա-  
տիւը, տուր ինձ յետ, իսկ եթէ չես տալ, թրախկ», ահա թէ  
ի՞նչ է առում նա:

ՕՎԱՆԵՍ — Հեռացրու ինձանից: Փորձանքի մէջ մի քցի ինձ:

ԳԱՍՊԱՐ — Ո՞ւր է քո ինքնասիրութիւնը:

ՕՎԱՆԵՍ — Եթէ ես նրան չէի կարաղ տալ այս ճոխութիւնը, ա-  
պա ի՞նչ իրաւունք ունիմ պատիւ պահանջելու:

ԳԱՍՊԱՐ — Հա հա հա...: Դու արդէն խմօրվել ես Արամի փչած  
քամիներից: Թող այդ յիմարութիւնները: Լսիր. ես արդէն  
կաշառել և բերել եմ մի պատանու: Նա այնտեղ խաղասեն-  
եակումն է: Արա ի՞նչ անելու ես: Ես կրցեմ նրան օրիորդի  
ննջարան և դուռը կծածկեմ: Յանցանքը կրցենք նրա վրա,  
իսկ օրենքը, նրան, որովհեան նա անչափահաս է և արրած,  
— չի դատապարտի:

ՕՎԱՆԵՍ — Մի յիմարացնի ինձ, Գասպար, մի մոլերեցնի ինձ:

ԳԱՍՊԱՐ — Արան էլ համաձայն չես: Դէ ուրեմն բաւական է: Էլ  
աւելորդ է իմ խօսելը: Նոր հովերով տարուած՝ նոր ճամփա-  
հս բռնել, զնա եղբայր: Ես քեզ յետ չեմ կանգնեցնի: Այդ-  
պիսի մի գործ կատարում են բոլիաբար, կատարում են ա-  
ռանց տատանումների: Իսկ ով էսօրէգուցի քցեց, էլ վեր-  
ջացաւ: Բարի ճամփա:

ՕՎԱՆԵՍ — Սպասիր, մի նեղանալ...

ԳԱՍՊԱՐ — Ահ, անհամբերութիւնը խեղդում է ինձ...: Դու չես  
կարող հանգցնել այն հրդեհը, որ պանկուել է իմ ներսում:  
զնում ես, զնա: Ինչ ինձ է վերաբերում... ես, էլ չեմ ուշաց-  
նի: (Գնաց խաղասենեակ):

7

### ՕՎԱՆԵՍ մենակ

ՕՎԱՆԵՍ — (Խմեց և սկսեց քայլել): Ախ, անգութ գեղեցկուհի:  
Ինչու բանը այստեղ հասցըիր, Օ եթէ կարելի լինէր առաջ  
ինձ, յետոյ իրան: Բայց ոչ, առաջ իրան և միմիայն իրան:  
Սյդպէս է բնութեան անողոք օրէնքը:— Տանջվիր ինչպէս և  
ինչքան կուղես, բայց նախ աչքովդ տես, թէ ինչպէս կը-  
թափուի նրա տաք-տաք արիւնը, ինչպէս սարսափած կրցի:  
Քո վրա իր վերջին հայեցքը, ինչպէս կիցի իր վերջին շուն-  
չը: Եւ ինձ կկալանաւորեն: Յետոյ կրերեն ինձ մօտ իմ ծը-  
նողներին: Եւ ահա կզան կկանգնեն նրանք իմ առաջն և  
կսկսեն նայել ինձ յուսահատ ու սպանիչ հայեցքով: Իսկ  
ես կշարժեմ ոտքերիս զթաները, և ձայն կտամ:— Ճինչու էք  
եկել, միթէ ձեզ համար միենոյնը չէ, թէ ով կածի ձեր ցա-  
մաքած դիակների վրա Յ բուռ հողը, ինչու էք կեկել: Իսկ  
նրանք անխօս, զլուխները ծռած՝ լաց կլինեն, աղի արցունք  
կթափեն... Ահ, լացէք թէ կուղ այնքան, որ արտասուքի  
տեղ արիւն հոսի ձեր աչքերից, բայց... վճռուած է... ես պէտք  
անեմ, ի՞նչ պէտք է անեմ... ի՞նչ ասացի, Ոչ, հեռու ինձ-

Նից գիւական մարդեր: Ինչպէս լւաւ կլինէր: Ես կտայի նրան  
իմ սիրտը, կտայի իմ սէրը—իմ երիտասարդութիւնը: Յիմա՛րու  
միթէ դատարկ սէրը ոսկի է կամ զօհար: Միթէ նա ճոխու-  
թիւն է կամ զարդարանք: Միթէ իմ սղորմնիլի սէրը կարող  
էր տարացնել նրան ձմեռվայ ոտոնամանիքին: Կարող էր  
յագեցնել երբ նա քաղցած կլինէր կամ ծարաւ: Ես առաջար-  
կեցի նրան մի աննիւթ բան, իսկ նա ուզում է անա ինչ: (Յոյժ  
է տալիս շուրջը). Աչ ճիշտ է ասում Արամը.—պէտք է կոր-  
ծանել այդ ամենը և քար-քարի վրա չժողնել: Գէտք է այ-  
րել ոչչացնել այն ամեն, ինչ որ շացնում է մարդու աչքը:  
(Խմում է):

(Խաղասինեակից մտնում է Գրիգորը):

### 8

ՕՎԱՆԵՍ և ԳՐԻԳՈՐ:

ԳՐԻԳՈՐ — Երիտասարդ, չէք կամենում ինձ հետ մի բաժակ գի՞նի  
խմիլ:

ՕՎԱՆԵՍ — Աչ, ես նոր խմեցի:

ԳՐԻԳՈՐ — Խմենք մէկն էլ: (Ածում է):

ՕՎԱՆԵՍ — Չեմ կամենում:

ԳՐԻԳՈՐ — Իսկ եթէ ես առաջարկեմ մի լւաւ կենաց:

ՕՎԱՆԵՍ — Ինձ ոչ մի կենաց չի հետաքրքրում:

ԳՐԻԳՈՐ — Նոյնիսկ գեղեցիկ աղջիկների:

ՕՎԱՆԵՍ — Արժանի են ամենքը:

ԳՐԻԳՈՐ — Այն ժամանակ ով սրին սիրում է:

ՕՎԱՆԵՍ — Ես այդպիսին չունեմ:

ԳՐԻԳՈՐ — Եւ հազար փառք Աստծուն, եթէ այդպէս է: (Խմեց):

ՕՎԱՆԵՍ — Բարեկամ: Ես ձեզ խորհուրդ չեմ տայ անձանօթի հետ  
այդպիսի կատակներ անել:

ԳՐԻԳՈՐ — Թողէք պարոն Օվանէս: Հայրենակիցներ ենք և այդ  
բաւական է, որ իրար օխտը պորտը ճանաչենք:

ՕՎԱՆԵՍ — Ես ձեզ չեմ ճանաչում:

ԳՐԻԳՈՐ — Պատմեմ ճանաչեցէք: Անունո Գրիգոր է, ազգանունս  
Զարթունեան, մականունս՝ Փրանտ: Չեմ ասի երկնքից եմ  
վայր իջած: Ոչ: Մահկանացու եմ, ինչպէս բոլոր մարդիկը:  
Արհեստով թուղթ խաղացող եմ: Շրջելով ման եմ գալիս միու-  
սաստանի տօնավաճառները. գտնում եմ վաճառականներ,  
ինքս էլ վաճառական ձեանալով, հետները խաղում, և տա-  
նում այնքան, որքան բաւական է իմ այս շիկին:

ՕՎԱՆԵՍ — Ի՞նչ պէտք է անես, կանանց դուր դալու և նբանց  
յիմար զլուխները խաբելու համար սրանից լաւ միջոց չէիք  
կարող գտնել:

ԳՐԻԳՈՐ — Ճասկանում եմ ձեր կծու ակնարկի միտքը: Բայց մի  
մառանաք, որ ինձ նմանների մէջ էլ երբեմն թագնված են  
լինում աղմիւ հոգիներ: Ահա տեղը եկել է և ես կամենում եմ  
ձեզ մի երկու խօսք տակ: Միայն խօսք տուէք, որ ինձ պէտք  
է հաւատաք:

ՕՎԱՆԵՍ — Ասացէք:

ԳՐԻԳՈՐ — Ներէք պարզախօսութեանս: Սիրելի հայրենակից: Ձեր  
զլմին եկածը մի փորձանք է. և սա բաւական է, որ ձեզ իմ  
սրտին մօտիկ համարեմ: Ծշմարիտ է. խարուած լինելը մի  
ծանր վիշտ է, բայց ճշմարիտ է և այն, որ աշխարհը մնձ է,  
և որ, ամեն ինչ կաղացի և ալիւր կդառնայ: Դուք մի մա-  
քուր տղայ էք, ուրեմն զնացէք և փնորեցէք մի մաքուր էակ:  
Ես փակ առացի, գուք բաց հասկացէք: Էհ, լսեցի զնում եք  
օտար երկիր: Սա ամենալաւ միջոցն է:

ՕՎԱՆԵՍ — Այս... մանաւանդ՝ որ ուրիշների զուարձութիւնը չեմ  
խանդարի:

ԳՐԻԳՈՐ — Սիրալիում էք, եղրայր: Ես ամեն մի քաղաքում, ինչ-  
պէս և այստեղ, ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ մի ժամանակաւոր  
հիւր: Այսօր ձեր նաւը դէպի Անդրկասպի, վաղը իմը՝ դէպի  
վոլգայի ափերը:

(Մուտքով մտնում է Մարգարը):

ՕՎԱՆԵՍ, ԴՐԻԳՈՐ. յԵԹՈՅ ՄԱՐԴԱՐ և ՇՈՒՇԱՆԻԿ

ՄԱՐԴԱՐ — (Եկաւ զբսից): Վահ, Օվանէս, դու այստեղ ես ար զէն ձերոնց դէպի չեգենաւ ճամփեցի:

ՕՎԱՆԵՍ — Ոչինչ. երկրորդ սուլոցին ես այստեղ կլինեմ. Ասա տեսնեմ ինքդ այստեղ ինչ գործ ունես:

ՄԱՐԴԱՐ — Մի զարմանաւ: Եկել եմ զլուխս խոզել տամ: Բայց սա վերջին անգամն է, հա. Զլինի, շիմանամ պարոն Արամին լուր տանես, թէ չէ տղերքոնց կյայտնի, բուրդս զզզզել կտայ անունս սե տախտակին զրել կտայ:

ՕՎԱՆԵՍ — Ի՞նչ է. Զլինի՞ դու էլ նրանց շարքերը մտար:

ՄԱՐԴԱՐ — Ես չմտայ, Օվանէս ջան:—Հոսանքը տարաւ: իսկ հոս սանքի դէմ զնացողը զլուխը կկոտրի: Գարնանավերջի ցոյցին ես էլ մասնակցեցի: Եւ ինչ ցնց էր: Ճշմարիտ է մի քի ռէխներս տրորեցին, շարքներս ցրիւ տուխն, բայց կարմիր դրոշակներս խլել չկարողացան, եւ, փառք Աստծոյ, յաղթութիւնը մեր կողմ մնաց, Հօրդ մօտ դործում էինը 16 ժամ, ստանում 10—15 մանէթ. հիմա գործում ենք 12 ժամ և ստանում 60—70 մանէթ: Ահ, պարոն Օվանէս, Աստուած վկայ, մինչև հիմա էշ ենք եղել: Պարոն Արամի ասելով սա դեռ սկիզբն է: Կդայ ժամանակ, —և նա հեռու չէ, երբ կստանակը հարիւրներ և կդործենք 8 ժամ: Էհ, Եվլիսմիերդին սուտ չի ասում, որ երազը տարին կտարի: Դէ, կայ չկայ, դեռ մինմին կոնճենք: (Խմեց): Բարեկամ, ինչ տամ արհեստներս փուխնեք. Այսինքն դուք եղէք կօչկակար, իսկ ես մկրատ շինող:

ՕՎԱՆԵՍ — Միթէ պարոնը մկրատ շինող է:

ՄԱՐԴԱՐ — Եւ ինչպիսի մկրատ. մի անգամից 6—7 հոգու գլուխ է խողում և ինչպէս է խողում, —խըրթ-խըրթ և վերջացաւ:

ԴՐԻԳՈՐ — Դուք ասացիք իմ արհեստը ունինձ չէք հաւանում:

ՄԱՐԴԱՐ — Իմ ձեզ չհաւանելք քանի զրօշ արմէ: Ես սե եմ և միրքաւոր: Իսկ ձեղ հաւանում է մի էակ, որի նմանին ցերեկը

ճրագով ենք փնդրում: Այսպէս չէ ոլ. Օվանէս:

ՕՎԱՆԵՍ — Ել ուրիշ ասելիք չունես:

ՄԱՐԴԱՐ — Ա՛.. որ նեղանում ես, ես կհեռանամ: Գնանք պարոն, թէ չէ գլուխս քոր է գալիս, երեխ ոչիլ է զրել:

ԴՐԻԳՈՐ — Ես իսկոյն: (Ածում է):

ՄԱՐԴԱՐ — Դէս, բարի ճանապարհ, պարոն Օվանէս: (Խմեց, գնաց խաղասենեակ):

ԴՐԻԳՈՐ — Երիտասարդ. զրկվել նշանածից սա դեռ անուղղելի մի կորուստ չէ: Բայց ինչ կլինի մարզու զրութիւնը եթէ նա պսակվելուց յետոյ իմանայ, որ ինքը խարված է, իսկ այդպէս սպատահում է շատ անգամ: Ահա այդ մասին արմէր, որ դուք մի փոքր խորը մտածէիք: Զեր կենացը: (Ածեց խմեց):

ՕՎԱՆԵՍ — Շնորհակալ եմ: (Խմեց):

ՇՈՒՇԱՆ — (Մտաւ խաղասենեակից): Պարոն Դրիգոր, աղերքը ձեզ են սպասում:

ԴՐԻԳՈՐ — իսկ պարոն Օվանէսն էլ ձեզ: Բարի ճամփա (Գնաց խաղասենեակ):

10

ՕՎԱՆԵՍ և ԴՐԻԳՈՐ. յԵԹՈՅ ԳԱՍՊԱՐ:

ՕՎԱՆԵՍ — Վերջապէս մենք մենակ ենք:

ՇՈՒՇԱՆ — Դուք այդ շատ էկ ցանկանում:

ՕՎԱՆԵՍ — Հարցնում էք: Զէ որ սա վերջին անդամն է, որ ձեզ տեսնում եմ:

ՇՈՒՇԱՆ — Ուրեմն խմանք մէկ մէկ էլ:

ՕՎԱՆԵՍ — Զեզ հետ՝ թէկուզ մեռնել:

ՇՈՒՇԱՆ — Ինչու մեռնել. փառք Աստծոյ, մեր կեանքի դարունը դեռ նոր է սկսվել:

ՕՎԱՆԵՍ — Ոչ. Էլ երգիկց իմ երգը: Մահը մի մեծ միսիթարութիւն կլինէր ինձ համար: Նա վերջ կդնէր այն տանջանքին, որը ես եմ կրում: Որին անգթօրէն դատապարտվեցի: Ուրիշ բանէ ձերը: Դուք օրաւոր բացվում էք ինչպէս մի գեղեցիկ,

ինչպէս մի փարթամ վարդ:

ՇՈՒԾԱՆ — Մի վարդ՝ որը մի օր պէտք է թառամի: Հա հա հա:  
էն, խմենք, քանի որ կեանքը ժպտում է մեզ: (Բաժակ զար-  
կելով, խմենցին):

ՕՎԱՆԵՍ — Եթէ հնարաւոր լինէք, ևս կապտակէի նրան, ով տու-  
ել է ձեզ այդ գեղեցկութիւնը:

ՇՈՒԾԱՆ — Անգութ մի լինէք, պարոն 0վանէս: Միթէ դուք կը  
կամնայիք, որ ես ագել լինէի: Ամեն կողմից դրկված, ինչ  
կլինէք իմ զրութիւնը եթէ սա էլ չլինէր:

ՕՎԱՆԵՍ — Գեղեցկութիւնը մի թանգաղին գոհար է, երբ տէրը  
գիտէ նրա արժեքը:

ՇՈՒԾԱՆ — Ախ, որքան զուրեկան է, որ դուք դեռ շարունակում  
էք ինձ սիրել: Էն, խմենք մէկ մէկ էլ: Զէ որ ես մի խեն-  
թուլիկ եմ:

ՕՎԱՆԵՍ — Աչ, դուք խենթուլիկ չեք, այլ խորամանդ: Դուք ինձ  
էիք խենթացրել: Այսունետև ինձ ուրիշ մխիթարութիւն չմնաց:  
Փշվեց հրաշալի իրը, որով հիանում էի: Կորաւ ինձ համար  
նա: Կորաւ յաւիտեան: Անբախտ կորածի մէկը դարձայ:

ՇՈՒԾԱՆ — Ի՞նչ է պատճառը:

ՕՎԱՆԵՍ — Դուք:

ՇՈՒԾԱՆ — Ե՞ս, երբէք:

ՕՎԱՆԵՍ — Աւքեմ ով եկաւ պատճառը: Ասացէք ինձ, — ինչո՞ւ  
ստիպեցիք ինձ բանալ ձեր առաջ իմ սիրաք: Ինչո՞ւ ինձ գաղ-  
տնի համբոյրներ տուիք, իսկ յիտոյ վշշեցիք իմ յոյսերը: Ին-  
չո՞ւ ցեխի մէջ շպռտեցիք, ինչո՞ւ ոտքներիդ տակ տրորեցիք  
իմ սիրաք: Ի՞նչ իրաւունքով ոչնչացրիք իմ ամրողջ կեանքը:

ՇՈՒԾԱՆ — Ախ իմ խեղճ 0վանէս: Ես կարծում եմ դուք չորհա-  
կալ պիտի լինէք, որ թոյլ տուի սիրէք ինձ, համբոյրներով  
ծածէք թշերս ու աչքերս:

ՕՎԱՆԵՍ — Հմ.., կեզաի մէջ էլ լինէք ընկած, բայց դեռ մի ան-  
մեղ վարդ էք: Այս, խսկապէս, չէ որ այն մի քանի ժամերն  
էլ, եղեմական երջանկութիւն էր ինձ համար: Իոկ յետոյ: Ի՞նչ

մութ ամպեր խաւարեցրին ձեր միտքը: Ինչու անգութ կերպով  
մարեցիք ուրախութեանս աստղը: Խոսապանեցէք ճշմարիտը,  
այդ բոլորը կատարեցիք զիտութեամբ, կատարեցիք ինքներդ,  
թէ մի ուրիշը մոլորեցրեց ձեզ:

ՇՈՒԾԱՆ — Ինձ ոչ ոք չի մոլորեցրել: Ամեն ինչ ես արել եմ իմա-  
նալով:

ՕՎԱՆԵՍ — Ա՛, ուրեմն այդպէս: Ուրեմն յանցանքը վերջնում էք  
դուք ձեզ վրա:

ՇՈՒԾԱՆ — Ա՛հ հեռացրէք ձեզնից տխուր մտքերը: Մի վախե-  
ցնէք ինձ: Բաժանվում ենք միմիանցից: Արի խոռվ չմնանք:  
Արի բաժանվենք առաջվայ քաղցը սիրով: Ինչով է մեղաւոր  
անզօր, — ջրի վրա ընկած ծաղկի, — սրին քամին քշում է այն-  
տեղ, ուր ինքն է վազում: Խմենք մէկն էլ: (Ածեց): Սա ձեր  
կենացը:

ՕՎԱՆԵՍ — Մի խմէք Եւ ով եմ ես ձեզ համար:

ՇՈՒԾԱՆ — Մի եղրայր: Ինչ եղել է, չի եղել այսուհետեւ լինենք  
քոյր և եղրայր: Զէք հաւատու՞ր, այ. (Համբուրեց նրան):

ԳԱՍՊԱՐ — (Գլուխը հանում է խաղասենեակի դանից ու նայում):  
Այդպէս, այդպէս, խարիր յիմարի գլուխը և ձամփա զիր:

ՕՎԱՆԵՍ — Ով կարող է իմանալ ձեր գինը այնպէս, ինչպէս ես  
խելագարս: (Հանելով ետեից դանակը): Առէք այս գանակը,  
խփէք սրտիս մէջտեղին և ես ժպիտը դէմքիս կգլորվեմ ձեր  
սաքերի տակ:

ՇՈՒԾԱՆ — Օ ոչ: Ես այդպէս անգութ չեմ կարող լինել: (Առաւ-  
ձեռքից դանակը և դրեց սեղանի վրա): Չար միտքը հեռա-  
ցրէք ձեզնից, Ապրենք ամեն մէկս մեզ համար: Հաւատացէք.  
պարոն 0վանէս, ես խղճում եմ ձեզ: Բայց ինչ անեմ, երբ  
անզօր եմ, երբ ուրիշ կերպ անել չեմ կարող: Մի տիսրէք:  
կանցնեն օրեր: Կփոխվի աշխարհիս վրա ամեն ինչ, կփոխվեմ  
և ես, կգաք, կտեսնէք ձեր գեղեցիկ հարճնացուին թառամած,  
թոշնած և ինքներդ էլ կզարմանաք, որ մի ժամանակ սիրել էք  
նրան: Այս ժամանակ, — ով զիտէ, — զզվանքով երես կդարձնէք  
լինացը:

ՕվԱՆԵՍ — Օ թշուառ, միթէ գիտութեամբ վճռել էք վերջի վերջոյ անտուն-անտէր քաղաքի ծայրերում ընկածների շարքը մտնել: Միթէ վճռել էք պառաւութեան խորշումները թագացնելու համար երեսներդ շպարել: Անամօթ ժպիտը զէմքներ ըիդ չարունակել դուր գալ հարբածներին:

ՇՈՒՇԱՆ — Երբէք, Թոյն կընդունեմ, կսպանեմ ինձ, եթէ մէկը զզուանքով երես շրջի ինձնից: Ես կամենում եմ միշտ թարմու զրաւիչ միալ, Ես կամենում եմ ապրել փարթամ և շքեղ կեանքով: Ահ, խմենք, արբենք, Օվանէս! (Խմից):

ՕՎԱՆԵՍ — Ի՞նչ էք անում...

ՇՈՒՇԱՆ — Հա հա հա... Միթէ չես տեսնում: — Նայիր, զարմատ տիր: Ոչ ձիւն է եկել, ոչ անձրե, իսկ ես թրջուած եմ: Միրում ես ինձ, առ, թացրու ինձ: (Հնկնում է նրա վզով):

ՕՎԱՆԵՍ — Այո... գնա, պառկիր:

ԳԱՍՊԱՐ — Հմ, տղամարդ չի, այլ որդն, որ միայն սողալ դիտէ, դալարունել:

ՇՈՒՇԱՆ — Տար ինձ ննջարան և տնս ականջիդ ինչ պիտի ասեմ:

ՕՎԱՆԵՍ — (Ծածկաբար վերցնում է զանակը և Շուշանին տասնում ննջարան): Ասա ինչ պիտի ասէիր:

ՇՈՒՇԱՆ — Օվանէս, ես քոնն եմ... իսկ յետոյ բարի ճանապարհ: (Պառկեց).

ՕՎԱՆԵՍ — Բարի ճանապարհ և քեդ: (Խրում է զանակը նրա կուրծքը):

ՇՈՒՇԱՆ — Ա՛... (Ճիչ է արձակում և միանում): Լովում է շոգենաւի սուլոցը):

ՕՎԱՆԵՍ — Համբուրում է նրան և արիւնոտ դանակը ձեռին յետ գալիս): Գեղեցիկ էք և գեղեցիկ էլ մեռաւ: (Նկաաելով դասպարին) Ա՛... զու այստեղ դարան ես մտել:

Դէ, գնա, նայիր, կշտացիր: Դու ինձ ոմիր գործել տուիր... այո, ես սթափուել եմ, էլ հարբած չեմ... ես ոճրազործ եմ:

ԳԱՍՊԱՐ — (Խորին խորհրդաւոր եղանակով): Վերջացրիր:

ՕՎԱՆԵՍ — Դէ ասա..., այժմ զո՞ւ ես ինձնից:

ԳԱՍՊԱՐ — Էկովին:

ՕՎԱՆԵՍ — Դէ շոգնաւը կանչում է ինձ: Արբեցութիւնս անցաւ: Կս սթափուեցիր... (Ուզում է գնայ):

ԳԱՍՊԱՐ — Միայն այսքմնը:

ՕՎԱՆԵՍ — Դասպար... (Գրկը բացում է, զանակը ընկնում է ձեռքից):

ԳԱՍՊԱՐ — Օվանէս... (Գրկախառնվում են):

ՕՎԱՆԵՍ — Անգութ ինչ օմիր գործել տուիր ինձ... բաց թող, մեաս բարեաւ: (Գնաց մուտքի գռնով):

ԳԱՍՊԱՐ — Գնաս բարեաւ: (Գնակը վերցրուց, գնացննջարան և դուռը ծածկեց):

## 11

ԳԱՍՊԱՐ, ՍԱՀԱԿ, ԳԱՅԵԱՆԵ, ԳՐԻԳՈՐ, ԽԱՎԱՅՑՈՂՆԵՐ:

ՍՈՒՀԱԿ — (Յետ եկաւ դիշերաշորերսվ և տեսաւ Գասպարի ննջարան մտնելը): Էյ, ով ես, ինչու մտար այստեղ: (Փորձում է, դուռը չի բացվում): Ա՛ զողե՛ր, օգնեցէք...

ԳԱՅԵԱՆԵ — (Յետ գալով): Ի՞նչ է, ի՞նչ է պատահիլ:

ՍՈՒՀԱԿ — Գողեր, զողեր, ես իմ աչքովս տեսայ, մէկը այստեղ մտաւ:

ԳԱՅԵԱՆԵ — (Սօտենում է ննջարանի դռան): Ա՛հ, արիւն, Ո՞ւր է Շուշանիկը: Ուր է աղջիկս, օգնեցէք: (Մտնում են Գրիգոր, Մարգար և միւսներ): Գրիգոր, աղատիլ աղջկանս...

ԳՐԻԳՈՐ — Սպասէք: (Ննջարանի դռուը ծեծելով) Եյ ով կայ այն տեղ:

ԳԱՍՊԱՐ — (Ներսից): Այստեղ ես եմ,

ԱՄԵՆՔԸ — Ա՛... Գասպարն է... Գասպարը...

ԳՐԻԳՈՐ — Բաց արէք դուռը, թէ չէ ես կկոտրեմ:

ԳԱՍՊԱՐ — (Բանալով դուռը դանակը ձեռին յետ եկաւ): Հեռու

ամենքդ: (Ամենքը դռան առաջ երկու շարք կանգնելով): Յաւ-  
տնեցէք պօլիցիային, որ ևս սպանեցի նրան,  
ԳԱՅԵԱՆՔ — Ա... (Խփում է զվարի վազում հնջարան, ընկնում  
աղջկայ դիակի վրա):  
ԳՐԻԳՈՐ — Ինչու համար, անմիտ երիտասարդ:  
ԳԱՅՊՈՐ — Որովհետեւ սիրում էի նրան,  
(Սահակ թուլանում է),

Պատկեր:

(Վարագոյք):

Վ. Ե. Բ. Զ.


891.99

ՅԱՎՀ. ԹՈՒՄԵՆԵԱՆ

**ԹՄԿԱԲԵՐԴԻ** =

= ԱՌՈՒՄԸ





4962

4963

4964

4965

